ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԲՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2026թ.

ԻՆՆԱՄՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ



ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտության մշտադիտարկման և զբոսաշրջության 2026 թվականի իննամսյա աշխատանքների

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գիտական ուսումնասիրություններն ուղղված են «Դիլիջան» ազգային պարկում բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի ուսումնասիրմանը:

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում անտառների ընդհանուր վիճակի ուսումնասիրություն

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքներում անտառների ընդհանուր վիճակի ուսումնասիրության շրջանակներում իրականացվել են շրջայցեր: Իրականացվել է անտառների և ծառուտների ընդհանուր վիճակի մշտադիտարկում: Ուշադրություն է դարձվել բնական վերաճի ընթացքին, չորացած, վնասված, քամատապալ և ձյունակոտոր ծառերի առկայությանը, ինչպես նաև անտառային տարածքներում հնարավոր բացասական փոփոխությունների ժամանակին հայտնաբերմանը: Հաշվետու ժամանակահատվածում անտառային տարածքներում կատարվել է քամատապալ և ձյունակոտոր փայտանյութի հաշվառում: Հաշվառված փայտանյութի վերաբերյալ կազմվել են համապատասխան հաշվեգնահատման ցուցակներ և հատատեղի անձնագրեր, որոնք ներկայացվել են Շրջակա միջավայրի նախարարության համապատասխան գերատեսչություն: Հաշվառվել է 351 ծառ՝ 629,4 խտխմ ծավալով:

Բնապահպանության և ընդերքի տեսչության մարմնի աշխատակիցների հետ միասին կատարվել է ապօրինի հատված ծառերի տեսակների ճանաչման աշխատանքներ:

Իրականացվել է «Դիլիջան» ազգային պարկում առկա անտառմիջյան ճանապարհների ներկա վիճակի գնահատում և վերանորոգման ենթակա ճանապարհների գույքագրում:

- «Դիլիջան տեղամաս» 9- պահ 19 քառ. 40⁰ 42' 45" 44⁰ 51' 26" - 250 մետր
- «Դիլիջան տեղամաս» 7- պահ 24 քառ. 40⁰ 42' 45" 44⁰ 49' 51" - 600 մետր
- «Դիլիջան տեղամաս» 2- պահ 6 քառ. 40⁰ 44' 47" 44⁰ 54' 59" - 800 մետր
- «Շամախյան տեղամաս» 5- պահ 31 քառ. 40⁰ 45' 13" 44⁰ 48' 23"- 1000 մետր
- «Հաղարծին տեղամաս» 13-պահ 18, 2 քառ. 40⁰ 48' 06" 44⁰ 53' 20" 200 մետր
- «Հաղարծին տեղամաս» 14-պահ 36 քառ. 40⁰ 44' 45.6" 44⁰ 58' 18.9" 150 մետր
- «Գոշ տեղամաս» 2-պահ 9 քառ. 40⁰ 45' 14" 45⁰ 03' 29" 1000 մետր
- «Գոշ տեղամաս» 5-պահ 22 քառ. 40⁰ 43' 15" 44⁰ 59' 38" 300 մետր
- «Գոշ տեղամաս» 4 և 5-պահ 19, 21 քառ. 40⁰ 43' 35.06" 45⁰ 0' 24.05" 1000 մետր
- «Աղավնավանք տեղամաս» 1-պահ 1 քառ. 40⁰ 44' 16" 45⁰ 6' 5" 200 մետր

Հրդեհավտանգ վայրերի ճանապարհների վերականգնման և տեխնիկական վիճակի բարելավման աշխատանքներ

Համաձայն №Ն/1611/500 հանձնարարականի հաշվետու ժամանակահատվածում ազգային պարկի անտառամերձ, բուսածածկ տարածքներում հրդեհների ռիսկերի նվազեցման, հնարավոր հրդեհների առաջցումը կանխելու նպատակով , «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին պատկանող DT-75 մակնիշի տրակտորի միջոցով իրականացվել են ազգային պարկի տարածքում առկա ճանապարհների առավել վնասված և անցանելիության սահմանափակումներ ունեցող հատվածների վերանորոգման և վերականգնման աշխատանքներ: Աշխատանքների հիմնական նպատակն է բարելավել ճանապարհների տեխնիկական և շահագործման վիճակը, ապահովել դրանց անցանելիությունը և բարձրացնել հրդեհների առաջացման կամ տարածման դեպքում համապատասխան տեխնիկական միջոցների և անձնակազմի օպերատիվ տեղաշարժի հնարավորությունը: Աշխատանքներն իրականացվել են ազգային պարկի առավել ռիսկային հատվածներում, մասնավորապես՝

- «Շամախյան տեղամաս» մասնաճյուղի 1-ին և 2-րդ պահաբաժիններում, հրաձգարանի հարակից տարածքներում՝ վերականգնվել է ընդհանուր 500 մետր ճանապարհահատված՝ առավել վնասված 2 հատված:
- «Շամախյան տեղամաս» մասնաճյուղի 5-րդ պահաբաժնում՝ վերականգնվել է 1000 մետր ճանապարհահատված՝ առավել վնասված 6 հատված:
- «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի 9-րդ պահաբաժնում՝ վերանորոգվել է 250 մետր ճանապարհահատված՝ առավել վնասված 1 հատված:
- «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի 7-րդ, 8-րդ և 9-րդ պահաբաժիններով անցնող ճանապարհահատվածում՝ վերանորոգվել է 300 մետր ճանապարհ՝ առավել վնասված 4 հատված:
- «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի 5-րդ պահաբաժնում՝ վերականգնվել է 2000 մետր ճանապարհահատված՝ առավել վնասված 7 հատված:
- «Հաղարծին տեղամաս» մասնաճյուղի 11-րդ պահաբաժնում՝ վերանորոգվել է 1000 մետր ճանապարհահատված՝ առավել վնասված 5 հատված:



Մինչ 2026 թվականի սեպտեմբերի 30-ը Էկոպարեկային ծառայության աշխատակիցների կողմից կազմվել է 66 անտառախախտման արձանագրություն, որից 1-ը՝ ապօրինի հողային աշխատանք կատարելու վերաբերյալ, 13-ը վաչական իրավախախտում իսկ 52-ը ապօրինի ծառահատման վերաբերյալ 738 ծառ 14 ճյուղ 628.78 խտխմ ծավալով: Որից 33 անտառախախտման դեպք՝ 90 ծառ 2 ճյուղը 132.56 խտխմ ծավալով արձանագրվել է երրորդ եռամսյակի ընթացքում:



Ազգային պարկի տարածքում իրականացված շրջայցերի, ուսումնասիրությունների արդյունքում նախապես ընտրվել են ծառատունկի համար տարածքներ, որոնցից առավել նպատակահարմար և հասանելի հատվածներում խախտված էկոհամակարգի վերականգնման միջոցառումների /թվով 4 միջոցառում/ իրականացման շրջանակներում կազմակերպվել է ծառատունկ՝ տնկվել է հացենու 200տնկի՝ Շամախյան տեղամաս մասնաճյուղի 33 քառակուսում: Կատարվել է նաև ընդհանուր վիճակի դիտարկում , տվյալների հավաքագրում:



ԴԱՊ-ի կենսաբազմազանության բազայի տվյալների, շարունակական հավաքագրման / թարմացման աշխատանքներ

Կենսաբազմազանության տվյալների բազայում բույսերի տեսակային կազմի և դրանց աճելավայրերի գրանցման նպատակով 2026 թվականի 9-ը ամիսների ընթացքում հավաքագրվել են նյութեր: Բազայում կենդանիների վերաբերյալ տվյալները գրանցվել են տեղամաս – մասնաճյուղում կենդանիների հետքերի վերաբերյալ աշխատակիցների կողմից հավաքագրված և տեղադրված ֆոտոթակարդների տվյալների համաձայն:

Բազայում 2026 թվականի 9 ամիսների ընթացքում գրանցվել է 742 բուսատեսակ /որից 353-ը՝ 3րդ եռամսյակի ընթացքում/, 56 սնկեր, 167 անուն կենդանի /որից 61-ը՝ 3-րդ եռամսյակի ընթացքում/, որոնք պատկանում են հետևյալ ընտանիքների.

1. Երկկճղակավորների կարգ՝
- Եղջերուների ընտանիք՝ այծյամ
2. Գիշատիչների կարգ՝
- Արջերի ընտանիք՝ գորշ արջ
- Շնազգիների ընտանիք՝ աղվես, գայլ, շնագայլ
- Կատվազգիների ընտանիք՝ անտառային կատու, լուսան
3. Կզաքիսազգիներ՝ աքիս, կզաքիս, գորշուկ
4. Կրծողների կարգ ՝ սկյուռ,





«Դիլիջան» ազգային պարկի տարբեր կենսամիջավայրերում բուսական աշխարհի ուսումնասիրություն

2026 թվականի 9 ամիսների ընթացքում «Դիլիջան» ազգային պարկի տարբեր կենսամիջավայրերում՝ անտառներում, ենթանտառային գոտիներում, մարգագետիններում, մերձալպյան և խոնավ տարածքներում, իրականացվել է բուսական աշխարհի ուսումնասիրություն՝ բուսականության տեսակային կազմը, կենսամիջավայրերի ընդհանուր էկոլոգիական վիճակը, բուսածածկույթի կառուցվածքն ու փոփոխությունները գնահատելու, ինչպես նաև բնական և մարդածին գործոնների հնարավոր ազդեցությունները բացահայտելու նպատակով: Պարկի տարբեր տեղամաս-մասնաճյուղերում տեղադրվել են 10×10 մ, 1×1 մ և 1×10 մ չափերի մշտական փորձահրապարակներ, որոնցում ուսումնասիրվել են բույսերի տեսակային կազմը, բուսածածկույթի ծածկողականությունը, ինչպես նաև բույսերի ծաղկման և պտղավորման փուլերը: Ընդհանուր առմամբ 2026 թվականի ընթացքում ուսումնասիրվել է 12 փորձահրապարակ՝ Գոշ, Դիլիջան, Շամախյան, Հաղարծին և Աղավնավանք տեղամաս-մասնաճյուղերում:



«Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի /40°41'00,65"N,44°48'57,63"E/ անտառին հարակից մարգագետնային հատվածի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է բարձրախոտային, բազմատեսակ բուսականությամբ բնութագրվող կենսամիջավայր: Բուսածածկույթի ծածկողականությունը կազմել է շուրջ 90 տոկոս, գերակշռել են հացազգիները, որոնց հետ համակցված աճել են ընդավորների, վարդազգիների, գորտնուկազգիների, շրթնածաղկավորների, խոլորձազգիների և աստղածաղկավորների ընտանիքների ներկայացուցիչներ: Բուսականության բարձր տեսակային բազմազանությունը և բազմաշերտ կառուցվածքը պայմաններ են ստեղծում փոշոտող միջատների, թռչունների, մանր կաթնասունների և այլ անողնաշարավորների սնման, ապաստանի և բազմացման համար, ինչպես նաև նպաստում են էկոհամակարգի կայունությանը, հողի պահպանմանը, ջրի կլանմանը և ածխածնի կուտակմանը:



Նույն տարածքում կարևոր արդյունք է Կարմիր գրքում ընդգրկված Եղբորոսին կարմիր (Cephalanthera rubra) և Շուշան հայկական (Lilium armenum) տեսակների գրանցումը: 10×10 մ փորձահրապարակում միջինում արձանագրվել է 3–7 ծաղկած հայկական շուշան, ինչը հնարավորություն է տալիս հետագայում հետևել տվյալ տեսակի վիճակի և թվաքանակի փոփոխություններին:




«Գոշ տեղամաս» մասնաճյուղում /40°43'09,22"N,45°01'25,43"E/ ուսումնասիրվել է անտառին հարակից բնական մարգագետնային կենսամիջավայրը: Այստեղ արձանագրվել է խիտ և շարունակական բուսածածկույթ՝ բազմամյա խոտաբույսերի գերակշռությամբ: Բազմաթիվ են եղել շրթնածաղկավորների և խոլորձազգիների ներկայացուցիչները, այդ թվում՝ Anacamptis pyramidalis, Dactylorhiza urvilleana, Gymnadenia conopsea, Orchis mascula և Platanthera richardiana տեսակները: Հատկանշական արդյունք է Orchis purpurea ssp. caucasica տեսակի գրանցումը, որը մինչ այդ «Դիլիջան» ազգային պարկի կառավարման պլաններով ներկայացված ֆլորայի ցանկում ներառված չի եղել: Այս արձանագրումը լրացնում է պարկի բուսական աշխարհի վերաբերյալ առկա տվյալները և հիմք է ստեղծում տեսակի հետագա ուսումնասիրության համար:









Orchis purpurea ssp. Caucasica /Խոլորձ կովկասյան /

Անտառային կենսամիջավայրերում, մասնավորապես Աղավնավանք /40⁰43'22,61"N, 45⁰07'20,56"E/, Դիլիջան /40⁰40'34,15"N, 44⁰52'55,91"E/ և Հաղարծին /40⁰48'10,92"N, 44⁰53'46,26"E/ տեղամաս-մասնաճյուղերում, իրականացվել է բուսականության տեսակային բազմազանության և էկոլոգիական առանձնահատկությունների գնահատում: Դիտարկված խիտ տերևաթափ անտառները բնութագրվել են բազմաշերտ բուսականությամբ և բարձր խոնավությամբ: Վերին շերտում գերակշռել են հաճարենին, կաղնին, բոխին և թխկին, իսկ ստորին հարկերում զարգացած են եղել թփերի, մատղաշների և խոտաբույսերի շերտերը: Աղավնավանքի ուսումնասիրված հատվածում արձանագրվել են նաև կենի հատապտղային ծառատեսակ: Հաղարծին և Աղավնավանք տեղամասերում մեծ տարածում են ունեցել պտերները և ստվերասեր ու խոնավասեր այլ բույսերը:






Անտառային հատվածների ուսումնասիրության ընթացքում արձանագրվել է նաև կենդանական աշխարհի հետ բուսականության փոխկապակցվածությունը. հանդիպել են այծյամների նստատեղեր, կրծողների բներ և միջատների թրթուրներ, իսկ 2026 թվականի երրորդ եռամսյակում նկատվել են տարբեր թիթեռների, այդ թվում՝ Pieris, Erebia medusa և Argynnis paphia տեսակների մեծ թվաքանակներ: Այս տվյալները վկայում են ուսումնասիրված անտառային կենսամիջավայրերի՝ տարբեր կենդանական խմբերի համար սննդային և ապաստանի ռեսուրսների ապահովման կարևորության մասին:



Եղանակային պայմանները ազդեցություն են ունեցել բուսականության սեզոնային զարգացման վրա: Առատ ձյան և անձրևների, ինչպես նաև գերխոնավության հետևանքով ծառաբույսերի և խոտաբույսերի ծաղկման ու պտղակալման փուլերը նախորդ տարիների համեմատ ուշացել են միջինում 12 օրից մինչև մեկ ամիս: Միևնույն ժամանակ անտառային հատվածներում գրանցվել է սնկատեսակների բավականին մեծ քանակ: Այս տվյալները կարևոր են հետագա տարիների դիտարկումների համեմատության և կլիմայական պայմանների ազդեցության գնահատման համար:





«Հաղարծին» տեղամասում՝ դեպի «Թաքնված ջրվեժ» տանող ճանապարհի տարբեր հատվածներում, գրանցվել է Կարմիր գրքում ընդգրկված Հողմածաղիկ գորտնուկայինը (Anemone ranunculoides): Տեսակը հիմնականում հանդիպել է փոքր խմբերով, իսկ պոպուլյացիայի վիճակը գնահատվել է համեմատաբար կայուն: Տվյալ տարածքը հետագայում պարբերաբար դիտարկվելու է՝ տեսակի պոպուլյացիայի վիճակի փոփոխությունները ժամանակին արձանագրելու համար:



«Դիլիջան» տեղամաս մասնաճյուղի /40°40'20,80"N, 44°50'34,27"E/ ենթալպյան մարգագետնային կենսամիջավայրում իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է բարձր ֆլորիստիկական բազմազանություն, խիտ բուսածածկույթ և բնական էկոլոգիական գործընթացների պահպանվածություն: Բուսածածկույթի ծածկողականությունը կազմել է մոտ 90–100 տոկոս, գերակշռել են բազմամյա խոտաբույսերը, իսկ ուսումնասիրության

պահին բույսերի զգալի մասը գտնվել է ակտիվ վեգետացիայի և ծաղկման փուլում: Դոմինանտ են եղել *Myosotis*, *Ranunculus* և *Anemone* ցեղերի ներկայացուցիչները: Անմոռուկի և հողմածաղկի զանգվածային ծաղկումը խոնավ և լավ պահպանված լեռնամարգագետնային էկոհամակարգին բնորոշ ցուցիչ է: Տվյալ հատվածում չեն արձանագրվել հողի էրոզիայի օջախներ, սողանքային երևույթներ, մեխանիկական խախտումներ կամ հրդեհների հետքեր: Չեն դիտվել նաև ինտենսիվ արածեցման, աղբի կուտակման և այլ ակնհայտ մարդածին ազդեցության դրսևորումներ: Բուսածածկույթի ամբողջականությունը և բույսերի լավ կենսունակությունը հիմք են տվել կենսամիջավայրի ընդհանուր էկոլոգիական վիճակը գնահատելու որպես բարենպաստ: Հաշվի առնելով լեռնային մարգագետինների զգայունությունը կլիմայական փոփոխությունների և հնարավոր մարդածին ճնշումների նկատմամբ՝ նախատեսվում է շարունակել մշտադիտարկումը՝ բուսականության կառուցվածքի, տեսակային կազմի և ցուցիչ տեսակների պոպուլյացիոն դինամիկայի երկարաժամկետ գնահատման նպատակով:





«Շամախյան» տեղամասում տեղադրվել են 5 փորձահրապարակներ: 34-րդ քառակուսում /40°45′37,39″N, 44°49′47,48″E/ ուսումնասիրված մարգագետնային կենսամիջավայրում արձանագրվել է շարունակական խոտային բուսածածկույթ, ծաղկող խոտաբույսերի բարձր տեսակային բազմազանություն և կառուցվածքային տարասեռություն: Բուսածածկույթի ընդհանուր ծածկողականությունը կազմել է մոտ 90–100 տոկոս, իսկ բուսականության կազմում գերակշռել են բազմամյա խոտաբույսերը: Փորձահրապարակներում առավել հաճախ և տեսանելիորեն

գերակշռել են Leucanthemum vulgare (սպիտակածաղիկ սովորական) և Papaver orientale L. (արևելյան կակաչ) տեսակները: Մարգագետնային և անտառային բուսածածկույթների սահմանային գոտին ձևավորել է էկոտոնային պայմաններ, որոնք նպաստում են հարակից երկու կենսամիջավայրերին բնորոշ տեսակների համատեղ հանդիպմանը և կարող են մեծացնել տարածքի կենսաբազմազանությունը: Անտառամիջյան ճանապարհի եզրային հատվածներում արձանագրվել է Heracleum trachyloma/ բալդրղան/ տեսակը: Դրա տարածվածությունը ներկայումս սահմանափակ է և ընդարձակ խմբավորումներ չի ձևավորում: Այս հանգամանքը ցույց է տալիս ճանապարհամերձ հատվածների նկատմամբ հետագա մշտադիտարկման անհրաժեշտությունը:



«Շամախյան» տեղամասի 49-րդ քառակուսում /40°42′38,47″N, 44°45′28,98″E/ նույնպես արձանագրվել է բարձր բուսածածկույթ և բազմամյա խոտաբույսերի գերակշռություն: Բուսականության տարածական բաշխվածությունը եղել է խճանկարային, իսկ տարբեր բարձրության կենսաձևերի համակցությունը ձևավորել է բազմաշերտ խոտային ծածկույթ: Տվյալ հատվածում արձանագրվել է Rhynchocorys orientalis (Կտուցախոտ արևելյան) ինվազիվ տեսակի բավականին լայն տարածում: Ինվազիվ տեսակի տարածվածության գնահատման նպատակով 1×10 մ փորձահրապարակում իրականացվել է մշտադիտարկում: Փորձահրապարակների տվյալներով *Rhynchocorys orientalis*-ի առանձնյակների թիվը կազմել է 13–17, իսկ բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը տարբեր փորձահրապարակներում կազմել է 14–29 տեսակ: Այս տվյալները հնարավորություն են տալիս հետագայում համեմատել տեսակի թվաքանակի և տարածման փոփոխությունները և անհրաժեշտության դեպքում գնահատել դրա ազդեցությունը տեղական բուսականության վրա:









«Շամախյան» տեղամասի 6-րդ քառակուսում /40°47′04,02″N, 44°50′14,25″E/ միմյանցից 300մ հեռավորության վրա տեղադրվել են երկու փորձահրապարակներ՝ մարգագետնային և անտառային էկոհամակարգերի համեմատական դիտարկման համար: Մարգագետնային հատվածում բուսականության ծածկողականությունը հասել է 100 տոկոսի, տեսակային կազմը եղել է բազմազան, իսկ բազմամյա խոտաբույսերի խիտ և ոչ միատարր բաշխվածությունը ձևավորել է բազմաշերտ կենսամիջավայր:

Ընդհանուր առմամբ, իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ ազգային պարկի ուսումնասիրված տարածքների զգալի մասը բնութագրվում է բարձր տեսակային և կառուցվածքային բազմազանությամբ, խիտ բուսածածկույթով և բնական էկոլոգիական գործընթացների պահպանվածությամբ: Ուսումնասիրությունները հնարավորություն են տվել բացահայտել Կարմիր գրքում ընդգրկված տեսակների տարածվածությունը, արձանագրել նախկինում ֆլորայի ցանկում չներառված տեսակ, գնահատել ինվազիվ տեսակների առկայությունը և առանձնացնել այն տարածքները, որտեղ առկա են զբոսաշրջային,

ճանապարհային կամ կլիմայական գործոնների հնարավոր ազդեցություններ:Ստացված տվյալները հիմք են հանդիսանում բուսական աշխարհի վիճակի հետագա գնահատման, ինվազիվ տեսակների տարածման նկատմամբ վերահսկողության և տարբեր կենսամիջավայրերի երկարաժամկետ մշտադիտարկման կազմակերպման համար:







«Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանության և էկոհամակարգերի վիճակի գնահատման ցուցիչ (ինդիկատոր) տեսակների մոնիթորինգ

Համաձայն №Ն/16.4/7337 հանձնարարականի՝ «Դիլիջան» ազգային պարկում հաշվետու ժամանակահատվածում իրականացված շրջայցերի ընթացքում տարբեր տեղամասերում իրականացվել են հանձնարարականով սահմանված ցուցիչ (ինդիկատոր) տեսակների դիտարկումներ և գրանցումներ: Ուսումնասիրության նպատակն է գնահատել կենսաբազմազանության և էկոհամակարգերի ներկա վիճակը, արձանագրել ցուցիչ տեսակների

առկայությունը, տարածվածությունը և դրանց կենսամիջավայրերի վիճակը, ինչպես նաև ստանալ տվյալներ հետագա մոնիթորինգի և համեմատական գնահատումների համար:

Դիտարկումների ընթացքում ուսումնասիրվել են կենդանական, բուսական և սնկային աշխարհը ներկայացնող ցուցիչ տեսակներ: Արձանագրվել են՝ Ոզնասունկ փշոտ (Hericium erinaceus), Պաֆիա (Argynnis paphia), Ցիրցեա (Brintesia circe), Chiasmia clathrata, Կրոցեա դեղնաթիթեռ (Colias croceus), Լաթոնիա (Issoria lathonia), Դրիադա (Minois dryas), Մնեմոզինա (Parnassius mnemosyne), Փոքր ճանճորս (Ficedula parva), Միջին փայտփոր (Leiopicus medius), Մորու շահրիկ (Sylvia curruca), Եղնջաթռչնակ (Troglodytes troglodytes), Անակամպտիս բրգաձև (Anacamptis pyramidalis), Տատասկ պարուրված (Cirsium obvallatum), Պայթակենի դյուրաբեկ (Cystopteris fragilis), Գետնաստղ բուրավետ (Galium odoratum), Սպիտակածաղիկ սովորական (Leucanthemum vulgare), Խոլորձ արական (Orchis mascula), Մասրենի սովորական (Rosa canina), Մոշենի (Rubus), Կենի հատապտղային (Taxus baccata), Սովորական լուսան (Lynx lynx) և Վայրի խոզ (Sus scrofa):

Տարբեր տեղամասերից ստացված դիտարկումները լրացնում են ազգային պարկի կենսաբազմազանության վերաբերյալ առկա տվյալները և կարող են հիմք հանդիսանալ տեսակների տարածվածության, կենսամիջավայրերի վիճակի և դրանց փոփոխությունների հետագա գնահատման համար: Հաշվետու ժամանակահատվածում Կարմրախայտի (Salmo caspius) վերաբերյալ դիտարկումներ չեն իրականացվել, իսկ շրջայցերի ընթացքում Տերեփուկ արևային (Centaurea solstitialis) տեսակի գրանցում չի արձանագրվել:

Ուսումնասիրությունների ընթացքում կիրառվել են դաշտային դիտարկման, տեսակների հաշվառման, կենսամիջավայրերի նկարագրման և տարածական տվյալների հավաքագրման մեթոդներ: Ստացված արդյունքները, հավաքագրված տվյալները կարող են օգտագործվել կենսաբազմազանության տվյալների բազայի համալրման, հետագա մոնիթորինգի կազմակերպման, տեսակների տարածվածության և կենսամիջավայրերի վիճակի համեմատական գնահատման, ինչպես նաև պահպանության և կայուն կառավարման վերաբերյալ գիտականորեն հիմնավորված առաջարկությունների մշակման համար:







«Գոշ տեղամաս» մասնաճյուղի 19-րդ քառակուսում՝ /40°43'09,22"N, 45°01'25,43"E/ հատվածում ուսումնասիրություն է իրականացվել անտառային հատվածին հարակից մարգագետնային տարածքում: Ուսումնասիրության նպատակն է գնահատել ցուցիչ բուսատեսակի և դրա կենսամիջավայրի վիճակը, ինչպես նաև բնութագրել անտառ–մարգագետին անցումային՝ էկոտոնային գոտու բուսականությունը:



Տարածքը գտնվում է անտառի եզրային հատվածում, որտեղ մարգագետնային բուսականությունն աստիճանաբար սահմանակցում է լայնատերև անտառին: Բուսականության էկոլոգիական վիճակը գնահատվել է լավ, խոտածածկը խիտ է, բաշխված է շարունակական և համաչափ, մերկ հողի հատվածները գրեթե բացակայում են: Տարածքում չեն արձանագրվել մարդածին ազդեցության ակնհայտ նշաններ: Դոմինանտ տեսակն է Սպիտակածաղիկ սովորականը (Leucanthemum vulgare Lam.), որի ծածկույթը գնահատվել է մոտ 50–70 %: 100 մ² փորձահրապարակում ընդհանուր բուսածածկը կազմել է մոտ 95–100 %, իսկ մերկ հողի բաժինը՝ մինչև 5 %: Բացի Սպիտակածաղիկ սովորականից, արձանագրվել են Կորնգան անդրկովկասյան (Onobrychis transcaucasica), Խիտ ոջլախոտ (Pedicularis condensata), Ճանկխոտ արևելյան (Ajuga orientalis), Իժախոտ սովորական (Echium vulgare), Գետնամորի անտառային (Fragaria vesca), Տափոլոռ վարդագույն (Lathyrus roseus), Կտուցախոտ արևելյան (Rhynchocorys orientalis), Զանգակ եռատամ (Campanula tridentata), Քարառվույտ երփներանգ (Coronilla varia) և Փրփրուկ թեղանման (Filipendula ulmaria) տեսակները:

«Գոշ տեղամաս» մասնաճյուղի 19-րդ քառակուսու /40°43'13,32"N, 45°01'22,40"E, 40°43'14.24"N, 45°01'23.52"E/ հատվածում ուսումնասիրությունն իրականացվել է անտառային էկոհամակարգի վիճակի և դրա բնութագրող բուսատեսակների դիտարկման նպատակով: Ուսումնասիրված անտառային հատվածում հիմնական անտառկազմող ծառատեսակներն են կաղնին, հաճարենին և բոխին: Որպես ցուցիչ բուսատեսակ արձանագրվել է Գետնաստղ բուրավետը (Galium odoratum), որը տվյալ տարածքում նաև դոմինանտ տեսակ է: Գետնաստղ բուրավետի առկայությունը և դոմինանտ դիրքը հիմք է հանդիսանում տվյալ անտառային հատվածում բուսական համայնքի վիճակի հետագա գնահատման համար





«Աղավնավանք տեղամաս» մասնաճյուղի /40°43'29,05"N, 45°06'38,73"E, 40°43'28.95"N, 45°06'38.75"E/ հատվածներում գրանցվել են հետևյալ բուսատեսակները՝ Սանիկուլ եվրոպական

(Sanicula europaea), Խորդենի Ռոբերտի (Geranium robertianum), Ասպլեն սցոլոպենդրաձև (Asplenium scolopendrium), Վահանապտեր արական (Dryopteris filix-mas), Ատամնախոտ (Dentaria bulbifera) և Գետնաստղ բուրավետ (Galium odoratum): Տարբեր էկոլոգիական խմբեր ներկայացնող բուսատեսակների առկայության արձանագրումը հնարավորություն է տալիս բնութագրել ուսումնասիրված անտառային կենսամիջավայրը և ստեղծել հետագա մոնիթորինգի համեմատական հիմք: Տվյալները օգտագործվելու են բուսական կազմի փոփոխությունների, կենսամիջավայրի հնարավոր խախտումների կամ կայունության հետագա գնահատման համար:





«Աղավնավանք» տեղամասի /40°43'29,1"N, 45°06'38,7"E/ հատվածում ուսումնասիրությունն իրականացվել է Կարմիր գրքային տեսակ հանդիսացող Կենի հատապտղայինի (Taxus baccata) աճելավայրի վիճակը գնահատելու և տեղադրված փորձահրապարակի տվյալները գրանցելու նպատակով: Ուսումնասիրված տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմել է մոտ 55 %, խոտաբույսերի մակերեսը՝ մոտ 10 %, ծառաբույսերինը՝ մոտ 38 %, իսկ մամուռների և քարաքոսերի ծածկույթը՝ մոտ 3 %: Բաց հողի մակերեսը կազմել է մոտ 60 %:

Ծառաբույսերի միջին բարձրությունը մոտ 10մ է, իսկ խոտաբույսերինը՝ մոտ 30 սմ: Ծածկույթի, բաց հողի և բուսականության կառուցվածքային ցուցանիշները հնարավորություն են տալիս գնահատել Կենի հատապտղայինի աճելավայրի ներկա պայմանները և հետագայում համեմատել դրանց փոփոխությունները: Քանի որ *Taxus baccata*-ն Կարմիր գրքային տեսակ է, տվյալ փորձահրապարակի պարբերական ուսումնասիրությունը կարևոր է դրա աճելավայրի վիճակի նկատմամբ շարունակական վերահսկողություն իրականացնելու, հնարավոր փոփոխությունները ժամանակին հայտնաբերելու համար:



«Թաքնված ջրվեժ» արահետի կենսաբազմազանության ուսումնասիրություն

2026 թվականի հունիսի 1-ին Հայաստանի ամերիկյան համալսարանի «Կենսաբազմազանության պահպանություն և վերականգնում» (ESS 250: Biodiversity Conservation and Restoration) դասընթացի ուսանողները, կենսաբանական գիտությունների դոկտոր, դասախոս Ա. Գասպարյանի ղեկավարությամբ, իրականացրել են ուսումնաճանաչողական դաշտային այց «Դիլիջան» ազգային պարկ: Այցի հիմնական նպատակն էր BioBlitz մեթոդաբանության կիրառմամբ գնահատել «Թաքնված ջրվեժ» բնաճանաչողական արահետի կենսաբազմազանությունը՝ օգտագործելով iNaturalist հարթակը տեսակների գրանցման, տեղորոշման և լուսանկարահանման համար:

Ուսումնասիրված «Թաքնված ջրվեժ» բնաճանաչողական արահետը գտնվում է «Դիլիջան» ազգային պարկի միջին լեռնային անտառային գոտում և հանդիսանում է պարկի առավել հաճախ օգտագործվող էկոզբոսաշրջային երթուղիներից մեկը: Արահետի ընդհանուր երկարությունը կազմում է 2.0–3.3 կմ, երթուղին երկկողմանի է, միջին անցման տևողությունը՝

շուրջ 1 ժամ 30 րոպե, իսկ դժվարության աստիճանը գնահատվում է որպես միջին: Արահետն անցնում է ծովի մակերևույթից 1435–1535 մ բարձրությունների միջակայքով և ամբողջ երկայնքով ապահովված է ուղղորդող նշաններով:

Ձևավորված խմբի անդամների հետ համատեղ կազմակերպության կենսաբանի կողմից դաշտային աշխատանքների ընթացքում իրականացվել են կենսաբազմազանության դիտարկումներ, տեսակների հաշվառում, լուսանկարահանում և կենսամիջավայրերի նկարագրություն: Տվյալների համաձայն՝ ուսումնասիրված տարածքում բուսածածկը զբաղեցնում է ընդհանուր մակերեսի մոտ 80%-ը, ներառյալ ծառային և թփային բուսականությունը: Խոտածածկի ծածկույթը կազմել է միջինում 20–30%, բաց հողային մակերեսները՝ 50%-ից ավելի, իսկ սնկերի, քարաքոսերի, մամուռների և քարային մակերեսների համակցված բաժինը կազմել է մոտ 20–30%: Այս ցուցանիշները պայմանավորված են արահետի գծային կառուցվածքով, տեղանքի ռելիեֆով և տեղային միկրոէկոլոգիական առանձնահատկություններով:

Արահետն անցնում է միջին լեռնային լայնատերև անտառային էկոհամակարգերով, որտեղ գերակշռում են բնական ծագման հասուն անտառները: Տարածքում առկա են նաև սահմանափակ քանակությամբ գերհասուն և ցցաչոր ծառեր, որոնք կարևոր դեր ունեն անտառային էկոհամակարգի կառուցվածքային բազմազանության պահպանման, խոռոչաբնակ կենդանիների, սնկերի և սապրոքսիլային անողնաշարավորների կենսամիջավայրերի ձևավորման գործում:

Ծառային շերտում գերակշռում են հաճարենի արևելյանը (*Fagus orientalis*), վրացական կաղնին (*Quercus iberica*), արևելյան կաղնին (*Quercus macranthera*), սովորական բոխին (*Carpinus betulus*), դաշտային թխկին (*Acer campestre*), բարձր հացենին (*Fraxinus excelsior*) և սահմանափակ քանակությամբ սրտաձև լորենին (*Tilia cordata*): Թփային շերտում գրանցվել են սովորական տխլենին (*Corylus avellana*), սովորական զկռենին (*Mespilus germanica*) և սովորական գերիմաստին (*Viburnum lantana*): Ծառային և թփային շերտերի կազմն ու տարածվածությունը բնորոշ են տվյալ բարձրադիր գոտու կլիմայական և էդաֆիկական պայմաններին և ապահովում են կայուն, բազմաշերտ անտառային կառուցվածք:

Խոտածածկը հիմնականում ձևավորված է ստվերասեր և խոնավասեր բազմամյա տեսակներից, ինչը բնորոշ է լավ պահպանված լայնատերև անտառային էկոհամակարգերին: Բուսականության կառուցվածքն ու տեսակային կազմը վկայում են, որ արահետի երկայնքով անտառը գտնվում է բնական զարգացման փուլում՝ պահպանելով վերականգնման բնական գործընթացները և ապահովելով կենսամիջավայրերի շարունակականությունը:





Բնական վերաճի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մատղաշային շերտում գերակշռում են հաճարենու և բոխու երիտասարդ առանձնյակները: Ավելի սահմանափակ քանակությամբ հանդիպում են կաղնու, թխկու և լորենու մատղաշներ: Վերջիններիս բարձրությունը տատանվում է 0.5–2.5 մ սահմաններում, իսկ տարիքը գնահատվում է միջինում 1–10 տարի, ինչը վկայում է անտառի բնական վերականգնման գործընթացների ակտիվության մասին:

Ուսումնասիրված արահետի խոտածածկը ներկայացված է հիմնականում բազմամյա խոտաբույսերով: Բուսածածկը լավ պահպանված է, իսկ տեսակային կազմը բնորոշ է չափավոր խոնավ միջին լեռնային լայնատերև անտառներին: Գերակշռում են խառը տարախոտային

համակեցությունները, որոնք ապահովում են բարձր էկոլոգիական կայունություն և նպաստում են կենդանական աշխարհի բազմազանության պահպանմանը: Հիմնական համակեցությունները տարախոտայիններից կազմված խառը համակեցություններն են:

Արահետի անտառային խոտածածկում հանդիպում են՝

- ✓ խարբուկ խոշորածաղիկ (Lapsana grandiflora)/ աստղածաղկազգիների (բարդածաղկավորներ) ընտանիք/,
- ✓ Սինդրիկ օղակավոր (Polygonatum verticillatum) / հովտաշուշանազգիների ընտանիք/, ոզնախոտ հավաքված (Dactylis glomerata)/ դաշտավլուկազգիների (հացազգիներ) ընտանիքի/,
- ✓ Այծմորուք արևելյան (Galega orientalis)/ բակլազգիների (թիթեռնածաղկավորներ) ընտանիք/,
- ✓ Սանիկուլ (Sanicula europaea) /հովանոցազգիներ/,
- ✓ Մանուշակ (Viola) /մանուշակազգիներ՝ հստակ տեսակը նշել հնարավոր չէ, քանի որ բացակայում են ծաղիկները/,
- ✓ Գնարբուկ խոշորաբաժակ (Primula macrocalyx) /գնարբուկազգիների ընտանիք/,
- ✓ Եղինջ երկտուն (Urtica dioica)/ եղինջազգիների ընտանիք/,
- ✓ Եզան լեզու մեծ (Plantago major) / ջաղախոտազգիներ ընտ./,
- ✓ Աստղաբույս ամենամեծ (Astrantia maxima) /նեխուրազգիներ ընտ./,
- ✓ խորդենի անտառային (Geranium sylvaticum) /խորդենազգիների ընտ./,
- ✓ Խորդենի Ռոբերտի (Geranium robertianum) /խորդենազգիների ընտ./,
- ✓ Ատամնախոտ հնգատերև /Dentaria quingefolia/ /խաչածաղկավորների ընտ./,
- ✓ Իշակաթնուկ երկարատերև (Euphorbia oblongifolia) /իշակաթնուկազգիներ/,
- ✓ Աստղիկ սովորական (Stellaria media) /Մեխակազգիների ընտանիք/,
- ✓ Երեքնուկ մարգագետնային (Trifolium pratense) /բակլազգիների ընտանիք/,
- ✓ Դաղձ (Mentha) / շրթնազգիների ընտանիք /
- ✓ Գետնաստղ /Galium odorata/ /տորոնազգիների ընտանիքին պատկանող դեղաբույս/,
- ✓ Եղբորոսին կարմիր /Cephalanthera rubra/ - Գրանցված ՀՀ բույսերի Կարմիր գրքում
- ✓ Աքլորաբբուկ միջերկրածովյան /Rhinanthus mediterraneus /
- ✓ Ոջլախոտ / Delphinium/
- ✓ Աբեղախոտ անտառային / Stachys sylvatica/
- ✓ Զանգակ լայնատերև / Campanula latifolia/
- ✓ Կտուցախոտ արևելյան /Rhynchocorys orientalis / - ինվազիվ
- ✓ Խռնդատ / Verbascum/
- ✓ Ոջլախոտ խիտ / Pedicularis condensata /
- ✓ Սրոհունդ խոցված / Hypericum perforatum /
- ✓ Նվիկ արևելյան / Arum orientale/





Polygonatum verticillatum Primula macrocalyx /Utrica/





Ատամնախոտ /Dentaria/ Գետնասատղ /Galium odorata/ /Astranita/





Սանիկուլ/ Sanicula europaea/ Arum orientale


Cephalanthera rubra



Delphinium


Stachys sylvatica


Campanula latifolia


Rhynchocorys orientalis


Verbascum


Pedicularis condensata


Hypericum perforatum

- ✓ Ասպլեն մազանման /Asplenium trichomanes /
- ✓ Բասբայջ սովորական / Polypodium vulgare /
- ✓ Պայթակենի կոտրվող /Cystopteris fragilis/
- ✓ Պտեր արական / Dryopteris filix-mas/
- ✓ Ասպլեն սցոլոպենդրաձև /Asplenium scolopendrium/



Asplenium trichomanes



Polypodium vulgare



Cystopteris fragilis



Dryopteris filix-mas



Asplenium scolopendrium

«Դիլիջան» ազգային պարկի կենդանական աշխարհի տեղաշարժի, ուսումնասիրություն և տվյալների վերլուծություն


Հաշվետու ժամանակահատվածում «Դիլիջան» ազգային պարկի տարածքում իրականացվել են կենդանական աշխարհի ուսումնասիրություն և դաշտային հետազոտական աշխատանքներ՝ ուղղված տեսակային կազմի, տարածական բաշխվածության, կենսամիջավայրերի օգտագործման առանձնահատկությունների, տարածքային տեղաշարժերի և պոպուլյացիաների ընթացիկ վիճակի գնահատմանը: Ուսումնասիրությունների ընթացքում հավաքագրվել և վերլուծվել են կենդանիների անմիջական դիտարկումների, կենսագործունեության անուղղակի նշանների և ֆոտոթակարդների միջոցով ստացված տվյալները:


Կենդանական աշխարհի ուսումնասիրման աշխատանքների համակարգվածությունն ու տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով կիրառվել է դիտարկման միասնական մոտեցում՝ ներառելով մշտական և սեզոնային դիտակետեր, ինչպես նաև նախապես ընտրված երթուղիներով իրականացվող դաշտային ուսումնասիրություններ: Դրանց ընթացքում գրանցվել են կենդանիների անմիջական հանդիպումները, տարածքային տեղաշարժերի ուղղությունները, ինչպես նաև կենսագործունեության անուղղակի նշանները՝ ոտնահետքեր, արտաթորանք, կերակրման հետքեր, ծառերի և հողի վրա թողած քերծվածքներ և այլ բնորոշ հետքեր: Ֆոտոթակարդներ տեղադրվել և շահագործվել են Աղավնավանք, Շամախյան, Գոշ, Դիլիջան տեղամաս-մասնաճյուղերի առանձին հատվածներում: Ստացված պատկերային նյութերում հիմնականում գրանցվել են եվրոպական այծյամներ (Capreolus capreolus), եվրոպական գորշուկներ (Meles meles), կզաքիսներ (Martes spp.), մացառախոզեր և պարսկական սկյուռներ (Sciurus persicus): 2026 թվականի ֆոտոթակարդային տվյալների համադրումը նախորդ տարիների համապատասխան դիտարկումների հետ ցույց է տալիս, որ կենդանիների գրանցման ինտենսիվությունը համեմատաբար նվազել է: Նման միտում նկատվել է ոչ միայն առանձին դիտակետերում, այլև կենդանիների ակտիվ տեղաշարժի և միգրացիոն ուղիներին հարակից հատվածներում տեղադրված ֆոտոթակարդների արձանագրումներում: Այս հանգամանքը կարևոր է հետագա մոնիթորինգի շրջանակում, քանի որ միգրացիոն և տեղաշարժի ուղիները կենդանիների տարածքային օգտագործման դինամիկան գնահատելու առանցքային հատվածներ են:

Դաշտային ուսումնասիրությունների ընթացքում համեմատաբար հաճախ արձանագրվել են աքիսը (Mustela nivalis), քարակզաքիսը (Martes foina) և սովորական աղվեսը (Vulpes vulpes): Տվյալ տեսակների պարբերական գրանցումները հաստատում են դրանց ներկայությունը ազգային պարկի տարբեր անտառային և թփուտային կենսամիջավայրերում: Ազգային պարկի տարածքում լայնորեն տարածված է նաև պարսկական սկյուռը (Sciurus persicus): Դաշտային դիտարկումների ընթացքում տեսակի համեմատաբար բարձր հանդիպման հաճախականություն արձանագրվել է եղջերուների բազմացման կենտրոնին հարակից անտառային հատվածներում: Տվյալ տարածքում տեսակի հաճախակի հանդիպումները կարող են պայմանավորված լինել կերային ռեսուրսների հասանելիությամբ, անտառային բուսականության կառուցվածքով և համապատասխան կենսամիջավայրերի առկայությամբ: Նշված գործոնների ազդեցությունը հետագա ուսումնասիրությունների ընթացքում կարող է

ճշգրտվել քանակական հաշվառման և կերային ռեսուրսների գնահատման տվյալների համադրմամբ: Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել են նաև այլ կաթնասունների ներկայություն և կենսագործունեության հետքեր, այդ թվում՝ եվրասիական լուսան (Lynx lynx), եվրոպական այծյամ (Capreolus capreolus), անտառային կատու (Felis silvestris), եվրոպական գորշուկ (Meles meles), վայրի խոզ (Sus scrofa) և կզաքիսների ընտանիքի (Mustelidae) այլ ներկայացուցիչներ: Նշված գրանցումները վկայում են ազգային պարկի տարածքում տարբեր էկոլոգիական խմբերի ներկայացուցիչների կողմից կենսամիջավայրերի շարունակական օգտագործման մասին: Ֆոտոթակարդներով գորշ արջի ուղղակի գրանցումներ հաշվետու ժամանակահատվածում չեն արձանագրվել: Դաշտային ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերվել են տեսակի կենսագործունեությունը բնութագրող անուղղակի նշաններ, մասնավորապես՝ ոտնահետքեր և արտաթորանք: Հետևաբար, ֆոտոթակարդային գրանցումների բացակայությունը չի կարող մեկնաբանվել որպես տեսակի բացակայություն տվյալ տարածքից:

Ստորև ներկայացվում է այծյամների և արջերի 2020-2026 թվականների նույն ժամանակահատվածի համար կազմված համեմատական դիագրամները:




2020-2026 թվականների ընթացքում
Կովկասյան գորշ արջի / Ursus arctos /
թվաքանակի համեմատական դիագրամ
70
60
50
40
30
20
10
0
49
38
53
58
65
32
25
2020 թվական
2021 թվական
2022 թվական
2023 թվական
2024 թվական
2025 թվական
2026 թվական







«Դիլիջան» ազգային պարկի «Կովկասյան ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոն»-ի վերաբերյալ տվյալների հավաքագրում

Դիտայցեր են իրականացվել «Կովկասյան ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն»-ում՝ եղջերուների մոտ կենսաֆիզոլոգիական փոփոխությունների, արտաքին կառուցվածքի (մազածածկույթի փոփոխության, եղջյուրների փոխարինման), ինչպես նաև վերարտադրության վերաբերյալ տվյալների հավաքագրման նպատակով: 2026 թվականի 9 ամիսների ընթացքում կենտրոնում ծվել է 7 ձագ: Եղջերուների կենտրոնում իրականացվել են կենդանիների անհատական հաշվառման, նույնականացման և տվյալների համակարգված գրանցման աշխատանքներ, որոնց նպատակն է ապահովել առանձնյակների շարունակական մոնիթորինգը, կենսաբանական վիճակի գնահատումը և պոպուլյացիայի կառավարման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ձևավորումը: Աշխատանքների իրականացման ընթացքում յուրաքանչյուր առանձնյակի համար լրացվել է անհատական հաշվառման քարտ, որտեղ ներառվել են կենդանու հիմնական կենսաբանական և նույնականացման տվյալները՝ անհատական համար, ծննդյան ամսաթիվ, սեռ, անվանում (առկայության դեպքում), մորթու գունավորում, կենդանի զանգված, նույնականացման համար (չիպ կամ պիտակ), ինչպես նաև առողջական վիճակին և կենսաբանական առանձնահատկություններին վերաբերող նշումները: Հավաքագրված տեղեկատվության հիման վրա ձևավորվել և պարբերաբար թարմացվել է էլեկտրոնային տվյալների բազա, որը հնարավորություն է տալիս իրականացնել յուրաքանչյուր առանձնյակի կենսական ցուցանիշների երկարաժամկետ դիտարկում, հետևել աճի, զարգացման, վերարտադրության, տեղափոխման և այլ կենսաբանական գործընթացների դինամիկային:



«Դիլիջան» ազգային պարկի՝ «Կովկասյան ագնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն»-ի եղջերուների

№	Ծննդյան մսաթիվ /Date of birth/	Ծննդյան վայրը /Place of birth/	Սեռը /Sex/	Անուն /Name/	Գունավորում /Color/	Քաշը /Weight/	Հատուկ նշաններ /Markings/	Նույնականացման համար /ID number/
1	28.05.2018թ	Իրան	արական	Փալվար-Palvar	Dark brown	150կգ	1801	051090032300691
2	14.05.2017թ	Իրան	արական	Զագրոս-Zagros	Dark brown	170կգ	1802	051090032300700
3	07.05.2021թ	ԴԱՊ	արական	Գոշ-Gosh	Dark brown	70կգ	1803	051090032300713
4	12.06.2021թ	ԴԱՊ	արական	Հատիս-Hatis	Dark brown	70կգ	1804	051090032300712
5	22.05.2017թ	Իրան	արական	Տաֆտան-Taftan	Dark brown	120կգ	1805	051090032300715
6	03.06.2018թ	Իրան	արական	Նադեր-Nader	Dark brown	110կգ	1806	05109003230084
7	27.05.2017թ	Իրան	իգական	Անահիտա-Anahita	Dark brown	90կգ	1807	051090032300848
8	12.05.2018թ	Իրան	իգական	Arezou	Dark brown	90կգ	1808	051090032300843
9	02.05.2019թ	ԴԱՊ	իգական	Dina	Dark brown	75կգ	1809	051090032300847
10	14.05.2017թ	Իրան	արական	Abbas	Dark brown	200կգ	1810	051090032300846
11	18.05.2019թ	ԴԱՊ	իգական	Zina	Dark brown	90կգ	1811	051090032300842
12	17.05.2020թ	ԴԱՊ	արական	Masis	Dark brown	120կգ	1812	051090032300860
13	22.06.2021թ	ԴԱՊ	արական	Garnuk	Dark brown	50կգ	1813	051090032300857
14	26.05.2017թ	Իրան	իգական	Dilara	Dark brown	110կգ	1814	051090032300858
15	12.05.2018թ	Իրան	իգական	Azita	Dark brown	80կգ	1815	051090032300844
16	19.05.2018թ	Իրան	իգական	Ariana	Dark brown	80կգ	1816	051090032300849
17	07.05.2018թ	Իրան	իգական	Elnaz	Dark brown	80կգ	1817	051090032300851
18	25.05.2018թ	Իրան	իգական	Darya	Dark brown	80կգ	1818	051090032300850
19	19.05.2021թ	ԴԱՊ	իգական	Parzik	Dark brown	70կգ	1819	051090032300853
20	08.05.2021թ	ԴԱՊ	արական	Areg	Dark brown	90կգ	1820	051090032300859
21	07.06.2021թ	ԴԱՊ	արական	Siz	Dark brown	70կգ	1821	051090032300856
22	14.05.2021թ	Իրան	իգական	Nare	Dark brown	75կգ	1822	051090032300852
23	16.06.2018թ	ԴԱՊ	արական	Dili	Dark brown	220կգ	1823	051090032300854
24	16.05.2015թ	Իրան	իգական	Urmiya	Dark brown	150կգ	AY4	
25	08.05.2015թ	Իրան	իգական	Khanum	Dark brown	140կգ	AY3	051090032300845
26	04.05.2022թ	ԴԱՊ	արական	Մնաց	Dark brown		1833	051090032300433
27	12.05.2022թ	ԴԱՊ	արական	Մեսրոպ	Dark brown		1834	0510900323004429
28	10.05.2022թ	ԴԱՊ	իգական	Մարի	Dark brown		1835	051090032300421
29	22.05.2022թ	ԴԱՊ	արական	Մամիկ	Dark brown		1836	051090032300435
30	01.06.2022թ	ԴԱՊ	իգական	Լարա	Dark brown		1837	051090032300423
31	04.06.2022թ	ԴԱՊ	արական	Մարտին	Dark brown		1838	051090032300422
32	10.06.2022թ	ԴԱՊ	արական	Մարատ	Dark brown		1839	051090032300439
33	18.06.2022թ	ԴԱՊ	իգական	Լուա	Dark brown		1840	051090032300438
34	17.06.2023թ	ԴԱՊ	արական	Պետրոս	Dark brown		41	
35	07.06.2023թ	ԴԱՊ	արական	Սիփան	Dark brown		28	
36	11.06.2023թ	ԴԱՊ	արական	X	Dark brown			
37	10.06.2023թ	ԴԱՊ	արական	Սարո	Dark brown		29	
38	31.08.2023թ	ԴԱՊ	իգական	Կարին	Dark brown		42	
39	02.06.2023թ	ԴԱՊ	արական	Մուրադ	Dark brown		26	
40	30.05.2023թ	ԴԱՊ	արական	Ուտիկ	Dark brown		25	
41	25.05.2023թ	ԴԱՊ	արական	Եփրեմ	Dark brown		24	
42	15.06.2023թ	ԴԱՊ	արական	Վազգ	Dark brown		30	
43	26.06.2023թ	ԴԱՊ	արական	Վարո	Dark brown		32	2025 թվականի մայիսի 22-ին բաց է թողնվել բնություն՝ 3-րդ խմբաքանակ
44	17.06.2023թ	ԴԱՊ	արական	Բալո	Dark brown		31	
45	02.06.2023թ	ԴԱՊ	արական	Սերոբ	Dark brown		27	2025 թվականի մայիսի 22-ին բաց է թողնվել բնություն՝ 3-րդ խմբաքանակ
46	06.07.2024թ	ԴԱՊ	արական	Մուշեղ	Dark brown		1853	0643090000753066
47	10.06.2024թ	ԴԱՊ	իգական	Լարա	Dark brown		1856	064309000753071
48	06.07.2024թ	ԴԱՊ	արական	Սուրեն	Dark brown		48	0643078798004726
49	10.06.2024թ	ԴԱՊ	արական	Լուսո	Dark brown		1850	0643090000753389
50	10.06.2024թ	ԴԱՊ	արական	Լիզա	Dark brown		1854	0643090000753069
51	11.08.2024թ	ԴԱՊ	արական	Սեթո	Dark brown		44	064309000753381
52	06.07.2024թ	ԴԱՊ	իգական	Լիդա	Dark brown		45	
53	25.08.2024թ	ԴԱՊ	իգական	Նանե	Dark brown		52	0900215000477164 0643090000753399
54	03.09.2024թ	ԴԱՊ	իգական	Նարա	Dark brown		47	Անկում՝ 11.10.2025
55	11.08.2024թ	ԴԱՊ	արական	Սարո	Dark brown		46	
56	25.05.2025թ	ԴԱՊ	արական	Բուզանդ	Dark brown		1861	051090032300855
57	29.05.2025թ	ԴԱՊ	իգական	Նադիա	Dark brown		1859	051090032300427
58	27.05.2025թ	ԴԱՊ	իգական	Փիրուզ	Dark brown		1858	051090032300434
59	17.06.2025թ	ԴԱՊ	իգական	Լիդիա	Dark brown		1860	
60	24.05.2025թ	ԴԱՊ	արական	Բյուզանդ	Dark brown		1857	051090032300428

1	24.05.2026	ԴԱՊ	իգական		Dark brown		1862		մայրը՝ 1814, հայրը՝ 1821
2	01.06.2026	ԴԱՊ	արական		Dark brown		1863		մայրը՝ 1818, հայրը՝ 1801
3	04.06.2026	ԴԱՊ	իգական		Dark brown		1864		մայրը՝ 1850, հայրը՝ 1812
4	04.06.2026	ԴԱՊ	արական		Dark brown		1865		մայրը՝ 1848, հայրը՝ 1812
5	23.07.2026	ԴԱՊ	իգական		Dark brown		1866		մայրը՝ AU 4, հայրը 1812
6	30.07.2026	ԴԱՊ	իգական		Dark brown		1867		մայրը՝ AU 3, հայրը 1821
7	13.08.2026	ԴԱՊ	իգական		Dark brown		1868		մայրը՝ 1818, հայրը՝ 1801
8	09.09.2026	ԴԱՊ	արական		Dark brown				մայրը՝ 1840, հայրը՝ 1821
9	12.09.2026	ԴԱՊ	արական		Dark brown		1869		մայրը՝ 1822, հայրը՝ 1812

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների ուսումնասիրության արդյունքները

2026 թվականի 9 ամիսների ընթացքում «Դիլիջան» ազգային պարկի տարածքում իրականացվել են ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների ուսումնասիրություններ՝ դրանց տեսակային կազմը, տարածվածությունը, հնարավոր աճելավայրերը, վեգետացիոն առանձնահատկությունները և բնական էկոհամակարգերի վրա հնարավոր ազդեցությունը գնահատելու նպատակով: Ուսումնասիրությունների համակարգվածությունն ապահովելու նպատակով հավաքագրվել են տվյալներ նախորդ տարիներին ազգային պարկում առավել հաճախ գրանցված տեսակների վերաբերյալ: Երրորդ եռամսյակում ընտրված տարածքներում իրականացվել են շրջայցեր և դիտայցեր, կատարվել է բուսատեսակների վիզուալ զննում և լուսանկարում, տեղադրվել են 1×10 մ կամ 3×3 մ չափերի կետային փորձահրապարակներ, իրականացվել է տվյալների հավաքագրում: Նախատեսվում է նաև հաջորդ տարվա ընթացքում շարունակել դիտարկումները՝ բույսերի աճի և զարգացման տարբեր փուլերում դրանց աճելավայրերի և պոպուլյացիաների ընդհանուր վիճակի փոփոխությունները գնահատելու նպատակով:

Արդյունքում, որպես հիմնական թիրախային տեսակներ ընտրվել են առավել տարածված 7 տեսակներ՝ հաշվի առնելով դրանց նախկինում հաճախակի գրանցումը և ագրեսիվ կամ սակավ ագրեսիվ բնույթը.

- Տատասկ ալեհեր (*Cirsium incanum*),
- Կոնիզա կանադական (*Conyza canadensis*),
- Ամբրոզիա օշինդրատերև (*Ambrosia artemisiifolia*),
- Բալդրղան Սասնովսկու (*Heracleum sosnowskii*),
- Կտուցախոտ արևելյան (*Rhynchocorys orientalis*),
- Կեղծ ղանձլամեր սպիտակ (*Veratrum album*),
- Սպիտակածաղիկ սովորական (*Leucanthemum vulgare*):

Տատասկ ալեհեր (*Cirsium incanum*) տեսակի ուսումնասիրությունն իրականացվել է ազգային պարկի տարածքում դրա տարածվածության, աճելավայրերի և մարգագետնային էկոհամակարգերի վրա հնարավոր ազդեցության գնահատման նպատակով: Տատասկ ալեհերը համեմատաբար մեծ թվաքանակով գրանցվել է «Դիլիջան» տեղամասի 4-րդ և 5-րդ քառակուսիներում, ինչպես նաև «Աղավնավանք» տեղամասի 10-րդ և 12-րդ քառակուսիներում: Տեսակն աճում է անտառ տանող ճանապարհների երկու կողմերի ճամփեզրերին, սակայն ներկայումս ավելի խոր տարածքներ ինտենսիվորեն չի ներթափանցում: Պատահականության սկզբունքով ընտրված հատվածներում արձանագրվել է միջինը 10–20 առանձնյակ/1 մ^2: Տեսակի տարածվածությունը առավել նկատելի է զբոսաշրջիկների մեծ հոսք ունեցող հատվածներում: Բավական հաճախ և մեծ կուտակումներով գրանցվել է մարգագետիններում, որտեղ կարող է ձևավորել գերաճող զանգվածներ: Մարգագետնային տարածքներում տեսակի կուտակումները կարող են մեծացնել մոնոդոմինանտ զանգվածների ձևավորման վտանգը, ինչի հետևանքով կարող է նվազել խոտաբույսերի տեսակային բազմազանությունը և մարգագետնային էկոհամակարգերի կայունությունը: ՈՒսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ներկայումս ազգային պարկում Տատասկ ալեհերի կողմից բնական էկոհամակարգերի ինտենսիվ ներթափանցման կամ ընդգծված ագրեսիվ վարքագծի դեպքեր չեն արձանագրվել: Հետևաբար, տվյալ տեսակի նկատմամբ անհրաժեշտ է շարունակական դիտարկում՝ տարածման ինտենսիվացման հնարավոր վաղ փուլերը հայտնաբերելու համար:



Կոնիզա կանադական (*Conyza canadensis*) տեսակի ուսումնասիրությունն իրականացվել է դրա տարածվածությունը և խախտված տարածքներից դեպի բնական էկոհամակարգեր հնարավոր ներթափանցման վտանգը գնահատելու նպատակով: Տեսակը գրանցվել է «Շամախյան» մասնաճյուղի 34-րդ քառակուսում՝ /N40°45'53,12", E44°49'44,45"/: Այն աճում է

անտառ տանող ճանապարհի երկու կողմերի ճամփեզրերին և ներկայումս լայն տարածում չունի: Տեսակի արագ և հեշտ բազմացումը, տարածման տարբեր եղանակները, էկոլոգիական ճկունությունը և տարբեր գործոնների նկատմամբ կայունությունը ստեղծում են տարածման ներուժ:Կոնիզա կանադականը կարող է արագ ներխուժել խախտված տարածքներ՝ անտառամիջյան ճանապարհներ, ծառահատված հատվածներ և այլ ազատ տարածքներ՝ սահմանափակելով տեղական բույսերի վերականգնումը: Տեսակի տարածման դեպքում այն կարող է աստիճանաբար փոխել բուսական համայնքի կառուցվածքը և նպաստել կենսաբազմազանության նվազմանը: Հետևաբար, ներկայումս դրա տարածման սահմանափակ բնույթը հնարավորություն է տալիս վաղ փուլում վերահսկել տեսակի տարածման ուղղությունները և կանխել դրա ներթափանցումը ավելի քիչ խախտված բնական էկոհամակարգեր:





Ամբրոզիա օշինդրատերև (*Ambrosia artemisiifolia*) տեսակի ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է ազգային պարկում դրա համեմատաբար լայն տարածվածությամբ և բարձր տարածման ներուժով: Ամբրոզիա օշինդրատերևը հատկապես հաճախ գրանցվել է «Աղավնավանք» և «Գոշ» տեղամասերում: Տեսակը հիմնականում հանդիպում է անտառ բարձրացող ճանապարհների եզրերին, ինչպես նաև Աղստև և Գետիկ գետերի երկայնքով:Բարձր սերմնային արտադրողականությունը և սերմերի երկարատև կենսունակությունը տեսակի համար ստեղծում են երկարաժամկետ տարածման բարձր ներուժ: Ազգային պարկի պայմաններում դա կարող է հանգեցնել դաշտային բուսականության նվազմանը, խոտաբույսերի բազմազանության խաթարմանը և մարգագետիններում արժեքավոր ծաղկաբույսերի դուրսմղմանը: Հետևաբար, Ամբրոզիա օշինդրատերևը պետք է դիտարկել որպես առաջնահերթ մշտադիտարկման ենթակա տեսակ, հատկապես գետերի երկայնքով և ճանապարհամերձ խոնավ հատվածներում:



Բալդրղան Սասնովսկու (*Heracleum sosnowskii*) տեսակի ուսումնասիրությունն իրականացվել է էկոհամակարգերի վրա ազդեցության և զբոսաշրջային երթուղիների համար հնարավոր ռիսկերի գնահատման նպատակով: Հաշվետու ժամանակահատվածի շրջայցերի ընթացքում Բալդրղան Սասնովսկին հաճախակի հանդիպել է ազգային պարկի բոլոր տեղամասերում: Ընդ որում, ընթացիկ տարում՝ նախորդ երկու տարիների համեմատ, առանձնյակների թիվը նկատելիորեն ավելի մեծ է, հատկապես մարգագետնային հատվածներում և գետաբերանների մոտ: Տեսակը հաճախակի հանդիպում է նաև էկոզբոսաշրջային երթուղիների ամբողջ երկայնքով: Էկոհամակարգային առումով տեսակը կարող է ձևավորել խիտ թփուտներ՝ սահմանափակելով այլ բուսատեսակների և ծառերի սածիլների աճն ու զարգացումը: Այսպիսով, Բալդրղան Սասնովսկու տարածման աճը պետք է դիտարկել որպես առաջնահերթ վերահսկման ենթակա խնդիր, հատկապես զբոսաշրջային երթուղիների, մարգագետինների և գետամերձ տարածքների հատվածներում:

Էքսպանսիվ բուսատեսակների ուսումնասիրությունն իրականացվել է ազգային պարկի տարածքում տեղական տեսակների տարածման և գերաճի հնարավոր հետևանքները գնահատելու նպատակով: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել այն տեսակներին, որոնք տարբեր հատվածներում առավել հաճախ են հանդիպում և կարող են խիտ ծածկույթներ ձևավորել:Ուսումնասիրությունների ընթացքում առավել լայն տարածում ունեցող էքսպանսիվ տեսակներ են առանձնացվել՝

- Կտուցախոտ արևելյան (*Rhynchocorys orientalis*),
- Կեղծ ղանձլամեր սպիտակ (*Veratrum album*),
- Սպիտակածաղիկ սովորական (*Leucanthemum vulgare*):

Հաշվետու ժամանակահատվածում դրանց տարածման հետևանքով բնական էկոհամակարգերի կայունության խախտման դեպքեր դեռևս չեն արձանագրվել: Կտուցախոտ արևելյան (*Rhynchocorys orientalis*) տեսակի նկատմամբ դիտարկումները կատարվել են դրա էքսպանսիվ վարքագիծը և տարբեր հատվածներում խիտ ծածկույթներ ձևավորելու հնարավորությունը գնահատելու նպատակով: «Հաղարծին», «Դիլիջան» և «Շամախյան» տեղամասերում տեսակը որոշ հատվածներում ցուցաբերում է էքսպանսիվ բնույթ և կարող է ձևավորել խիտ ծածկույթներ: Խիտ ծածկույթների ձևավորումը կարող է ճնշել փոքրաչափ խոտաբույսերին և սահմանափակել դրանց աճը: Ներկայումս բնական էկոհամակարգերի կայունության խախտում չի արձանագրվել, սակայն տարածման հետագա ակտիվացման դեպքում կարող են առաջանալ բուսական համայնքի կառուցվածքային փոփոխություններ: Հետևաբար, տեսակի տարածման դինամիկայի նկատմամբ անհրաժեշտ է շարունակական վերահսկողություն: Կեղծ ղանձլամեր սպիտակ (*Veratrum album*) տեսակը առավել հաճախ հանդիպում է «Դիլիջան» տեղամասի 44-րդ և 45-րդ քառակուսիներում, ինչպես նաև այլ բարձրադիր հատվածներում: Տեսակի տարածվածության վերաբերյալ հավաքագրված տվյալները հնարավորություն են տալիս առանձնացնել դրա հիմնական աճելավայրերը և հետագա դիտարկումների ընթացքում գնահատել պոպուլյացիաների տարածական փոփոխությունները: Ներկայումս դրա տարածման հետևանքով բնական էկոհամակարգերի կայունության խախտում չի արձանագրվել:Սպիտակածաղիկ սովորական (*Leucanthemum vulgare*) տեսակը տարածված է գրեթե ամբողջ ազգային պարկում և որոշ մարգագետնային հատվածներում արագ զբաղեցնում է ազատ տարածքները՝ ձևավորելով խիտ, մոնոդոմինանտ «գորգային» զանգվածներ:Խիտ զանգվածների ձևավորումը կարող է սահմանափակել այլ խոտաբույսերի աճը և սերմնաբաշխումը՝ փոխելով մարգագետնային բուսական համայնքի բնական կառուցվածքը: Թեև ներկայումս էկոհամակարգերի կայունության խախտման ընդգծված դեպքեր չեն արձանագրվել, տեսակի գերաճի շարունակականությունը կարող է երկարաժամկետ ազդեցություն ունենալ բուսական բազմազանության վրա:

2026 թվականի 9 ամիսների ուսումնասիրությունների արդյունքը ցույց է տալիս, որ որոշ ինվազիվ տեսակներ դեռևս չեն ներթափանցել բնական էկոհամակարգերի խորքային հատվածներ կամ չեն առաջացրել էկոհամակարգերի կայունության ակնհայտ խախտում, սակայն առանձին տեսակների՝ հատկապես Բալդրղան Սասնովսկու, Ամբրոզիա

օշինդրատերևի և Տատասկ ալեհերի, տարածվածության և կուտակումների առկայությունը պահանջում է շարունակական վերահսկողություն:



«Դիլիջան» ազգային պարկի տարբեր էկոհամակարգերից 30 բուսատեսակներից հերբարիումների պատրաստում

«Դիլիջան» ազգային պարկում իրականացված դաշտային ուսումնասիրությունների շրջանակներում կատարվել են բուսատեսակների զանազանման, ֆոտոփաստագրման, նմուշառման, չորացման և հերբարիումային նմուշների պատրաստման աշխատանքներ: Հերբարիումների պատրաստումն իրականացվում է ազգային պարկի բուսական աշխարհի փաստաթղթավորման, հավաքածուների համալրման և բնապահպանական կրթության ու իրազեկման նպատակով՝ որպես դիդակտիկ և ցուցադրական նյութ: 2026 թվականի 9 ամիսների ընթացքում դաշտային այցերի արդյունքում հավաքագրվել 30 բուսատեսակի նմուշ: Նմուշների հավաքագրումն իրականացվել է բույսերի վեգետացիոն և գեներատիվ զարգացման առավել տեղեկատվական փուլերում՝ պահպանելով հերբարիումային նյութերի հավաքման և մշակման ընդունված մեթոդական պահանջները: Նախատեսված է հերբարիումային նմուշներ հավաքել նաև ծառաբույսերից, աշխատանքները կիրականացվեն հաջորդ եռամսյակի ընթացքում՝ կիրականացվի հերբարիումների վերջնական պատրստման աշխատանքներ:






Թեյերի և թուրմերի համար օգտագործվող 5 անուն բուսատեսակների հավաքում և փաթեթավորում

2026 թվականի 9 ամիսների ընթացքում դիտայցերի և շրջայցերի շրջանակում բոլոր տեղամաս–մասնաճյուղերից, բույսերի օգտագործման կենսաբանական և ֆենոլոգիական առավել նպաստավոր ժամանակահատվածներում, իրականացվել են թեյերի, թուրմերի և այլ բուսական պատրաստուկների համար նախատեսված դեղաբույսերի հավաքման, տեսակավորման և չորացման աշխատանքներ: Աշխատանքները կրում են շարունակական բնույթ և թեյերի փաթեթավորումը կիրականացվի հաջորդ եռամսյակի ընթացքում:

Հավաքված բուսատեսակներն են՝

1. Mentha longifolia – Դաղձ երկարատերև
2. Thymus collinus – Ուրց բլրակային
3. Hypericum perforatum - Սրոհունդ խոցված
4. Tilia cordata - Լորենի սրտաձև
5. Oreganum vulgare – Խնկածաղիկ սովորական






էկոկրթական, ճանաչողական, դասընթաց – սեմինարների իրականացում ուսումնական հաստատությունների սաների, էկոխմբակների համար

Գոշի հիմնական դպրոց */ մասնակիցների թիվը 22/*

Բնապահպանական կրթության, շրջակա միջավայրի մասին գիտելիքների ձեռքբերման, բնապահպանական գործունեության հմտությունների և ընդհանուր բնապահպանական մշակույթի ձևավորման նպատակով «Դիլիջան» ազգային պարկի գիտության, մշտադիտարկման և զբոսաշրջության բաժնի աշխատակիցներն այցելել են Գոշի հիմնական դպրոց: Այցելության շրջանակում 5–9-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպվել և անցկացվել ինտերակտիվ բնապահպանական և էկոկրթական դասընթաց-սեմինար: Դասընթացի ընթացքում ներկայացվել է «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներն ու կենդանատեսակները, անդրադարձ է կատարվել բնության մեջ մարդու վարվելականոններին, ինչպես նաև բնության պահպանության կարևորությանը:



Խաչարձանի միջնակարգ դպրոց */ մասնակիցների թիվը 25 /*

«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի գիտության, մշտադիտարկման և զբոսաշրջության բաժնի աշխատակիցներն այցելել են Դիլիջան համայնքի Խաչարձանի միջնակարգ դպրոց: Այցելության շրջանակներում 5-8-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպվել և

ներկայացրել են ինտերակտիվ, բնապահպանական, էկոկրթական դասընթաց սեմինար, հագեցած գիտելիքների ստուգման խաղերով, որի շրջանակներում ներկայացվել են հետևյալ թեմաներով սահապատկերներ.

- ✓ ՀՀ Կարմիր գիրք: Կարմիր գրքային տեսակները «Դիլիջան» ազգային պարկում
- ✓ Անտառ, ծառահատումներ և դրանց հետևանքները



Դիլիջանի Ավագ դպրոց */ մասնակիցների թիվը 15/*

«Դիլիջան» ազգային պարկի այցելուների կենտրոն են այցելել Դիլիջանի Ավագ դպրոցի 10-րդ դասարանի սաները, նախագծային աշխատանքի ղեկավար, կենսաբանության ուսուցչուհի Ս. Սարուխանյանի գլխավորությամբ: Աշակերտների համար իրականացվել է սեմինար-քննարկում, «Դիլիջան համայնքում անտառահատման վտանգները և ինչպես աջակցել Դիլիջանի կենսաբազմազանության ապահովմանը» նախագծային աշխատանքի իրականացման շրջանակներում : Կազմակերպվել է քննարկում ազգային պարկում հնարավոր ծառահատումների և դրա հետևանքների վերաբերյալ: Աշակերտների կողմից հնչեցված հարցերին տրվել են սպառիչ պատասխաններ: Ինչպես նաև քննարկվել են կենսաբազմազանության կարևորության և դրա պահպանությանն ուղղված ծրագրերն ու միջոցառումները:





Դիլիջանի թիվ վեց հիմնական դպրոց */ մասնակիցների թիվը 23/*

«Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտական բաժնի նախաձեռնությամբ Դիլիջանի թիվ վեց հիմնական դպրոց»-ի 5–6-րդ դասարանների աշակերտների համար անց է կացվել «Վայրի բնության ապագան մեր ձեռքերում է» թեմայով էկոկրթական դասընթաց՝ նվիրված վայրի բնության պահպանության հիմնախնդիրներին և կենսաբազմազանության արժեքավորմանը: Դասընթացի շրջանակում ներկայացվել է վայրի բնության պահպանության կարևորությունը, ընդգծվել մարտի 3-ին նշվող Վայրի բնության համաշխարհային օրվա խորհուրդը, «Կարմիր գրքի» նշանակությունը՝ որպես հազվագյուտ և վտանգված բույսերի, կենդանիների և սնկերի պահպանության կարևոր գործիք: Հատուկ անդրադարձ է կատարվել «Դիլիջան» ազգային պարկին բնորոշ և ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակներին՝ շեշտադրելով դրանց պահպանության անհրաժեշտությունը և մարդու պատասխանատվությունը բնական միջավայրի նկատմամբ: Դասընթացն իրականացվել է ինտերակտիվ ձևաչափով. աշակերտները մասնակցել են հիշողությունն ու ուշադրությունը զարգացնող բնապահպանական խաղերի, պատասխանեցին թեմատիկ հարցերին և ամրապնդել՝ ստացած գիտելիքները:







Դիլիջանի թիվ վեց հիմնական դպրոց-մասնագիտական կողմնորոշման խմբակի անդամներ */ մասնակիցների թիվը 27/*

Անտառների միջազգային օրվա և Անտառագետի օրվա առթիվ «Դիլիջան» ազգային պարկի գիտական բաժնի աշխատակիցներն այցելել են Դիլիջանի թիվ վեց հիմնական դպրոց:

Այցի շրջանակում մասնագիտական կողմնորոշման խմբակի անդամների համար կազմակերպվել է էկոկրթական դասընթաց-քննարկում, որի ընթացքում ներկայացվել և քննարկվել են հետևյալ թեմաները՝

- ✓ Անտառների դերը և դրանց պահպանության կարևորությունը
- ✓ Ծառահատումների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա
- ✓ Անտառագետի մասնագիտությունը և դրա կարևոր առաքելությունը

Դասընթացի ընթացքում հատուկ ընդգծվել է անտառները կենսական նշանակությունը, կենսաբազմազանության պահպանման, կլիմայական հավասարակշռության ապահովման կարևորությունը մարդու բարեկեցության համար: Կարևորվել է անտառագետի մասնագիտության առանցքային դերը՝ բնական ռեսուրսների պահպանության և կայուն կառավարման գործընթացում:Հանդիպումն ամփոփվել է ակտիվ հարցուպատասխանի ձևաչափով, ինչը հնարավորություն է տվել աշակերտներին խորացնել իրենց գիտելիքները և ձևավորել պատասխանատու ու հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ:





Դիլիջանի թիվ 4 դպրոցի 6–8-րդ դասարանների աշակերտներ */ մասնակիցների թիվը 56/*

«Դիլիջան» ազգային պարկի գիտական բաժնի աշխատակիցները Դիլիջանի թիվ 4 դպրոցի 6–8-րդ դասարանների աշակերտների համար, ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Անվտանգ և ապահով կրթական միջավայր» տարվա կարգախոսի շրջանակներում, անցկացրել են դասընթաց՝ «Հրդեհներ, սողանքներ և բնապահպանական անվտանգություն» թեմայով: Դասընթացի ընթացքում ներկայացվել են բնական աղետները, դրանց առաջացման պատճառները և հնարավոր հետևանքները: Բացի այդ, անդրադարձ է կատարվել ազգային պարկի կարևորությանը, կենսաբազմազանությանը և դրա պահպանության անհրաժեշտությանը: Դասընթացն ավարտվել է քննարկված թեմաների շուրջ հարցուպատասխանի միջոցով:





Դիլիջանի ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտներ */ մասնակիցների թիվը 68/*


«Դիլիջան» ազգային պարկի գիտական բաժնի աշխատակիցները հանդիպել են Դիլիջանի ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտների հետ՝ նրանց ներգրավելով հետաքրքիր և ինտերակտիվ դասընթացում: Դասընթացը անց է կացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Անվտանգ և ապահով կրթական միջավայր» կարգախոսի շրջանակում ՝ «Հրդեհներ, սողանքներ և բնապահպանական անվտանգություն» թեմայով: Որի շրջանակներում ներկայացվել է բնական աղետների առաջացման պատճառները, դրանց հնարավոր հետևանքները տարբեր իրավիճակներում:



Դիլիջանի թիվ 4 դպրոցի պատանի կենսաբանները */ մասնակիցների թիվը 14/*

«Դիլիջան» ազգային պարկում հյուրընկալվել են Դիլիջանի թիվ 4 հիմնական դպրոցի «պատանի կենսաբաններ» խմբակի սաները: Խմբակի սաների համար կազմակերպվել է բաց քննարկում հետևյալ թեմաներով.

- ✓ «Դիլիջան» ազգային պարկի գործունեությունն ու նպատակը,
- ✓ «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը, ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքային տեսակները:




Վանաձորի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 15 հիմնական դպրոց */ մասնակիցների թիվը 20/*

7-րդ և 9-րդ դասարանների աշակերտները ազգային պարկ էին այցելել «Բույսերի դերը մեր կյանքում. Բնական ներկեր» և ՝ «Դեղաբույսերի օգտագործումը բժշկության մեջ» թեմաներով նախագծային աշխատանքների իրականացման շրջանակներում: Աշակերտների համար կազմակերպվել է բաց քննարկում-դասընթաց հետևյալ թեմաներով.

- ✓ «Դիլիջան» ազգային պարկի գործունեությունն ու նպատակը,
- ✓ «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը, ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքային տեսակները
- ✓ «Դիլիջան» ազգային պարկի դեղաբույսերը և դրանց կիրառումը

Աշակերտները դաշտային պայմաններում հավաքեցին դեղաբույսեր նախագծային աշխատանքի շրջանակներում օգտագործելու նպատակով:



Դիլիջանի ավագ դպրոց 12-րդ դասարանի աշակերտներ */ մասնակիցների թիվը 8/*

Դիլիջանի ավագ դպրոց 12-րդ դասարանի աշակերտների համար իրականացվել է դասընթաց-քննարկում սնկերի թեմայով: Աշակերտներն ազգային պարկ էին այցելել նախագծային աշխատանքի շրջանակներում՝ կենսաբանության ուսուցչուհի Ս. Սարուխանյանի գլխավորությամբ: Դասընթացի ընթացքում ներկայացվել են սնկերի կառուցվածքային առանձնահատկությունները, ագարիկոմիցետների, աֆիլոֆորային և գաստերոմիցետների հիմնական խմբերը, դրանց էկոլոգիական նշանակությունն ու դերը անտառային էկոհամակարգերում: Աշակերտներին տրամադրվել են նաև սնկերի տարբեր նմուշներ՝ թեման առավել գործնական և հետաքրքիր ձևով ուսումնասիրելու նպատակով: Քննարկումն անցել է ակտիվ և ինտերակտիվ մթնոլորտում՝ հարցուպատասխանի ու կարծիքների փոխանակման միջոցով, նպաստելով աշակերտների բնապահպանական գիտելիքների ընդլայնմանն ու բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանը:






Դիլիջանի թիվ 4 հիմնական դպրոցի 3-րդ դասարանի աշակերտներ
/ մասնակիցների թիվը 27/

Աշակերտների համար կազմակերպվել է հետաքրքիր և ուսուցողական էկոկրթական դասընթաց-քննարկում, որի ընթացքում սահապատկերների միջոցով բացահայտել են «Դիլիջան» ազգային պարկի հարուստ կենսաբազմազան աշխարհը՝ ծանոթանալով մեր անտառների բուսական ու կենդանական եզակի տեսակներին:Աշակերտները մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրել ՀՀ Բույսերի և Կենդանիների Կարմիր գիրքը, հերբարիումային նմուշները, լսել բնության մասին հետաքրքրաշարժ պատմություններ և ակտիվորեն մասնակցել հարցուպատասխանին ու ճանաչողական խաղերին:












Սարիգյուղի Համլետ Աթաբեկյանի անվան միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտներ */ մասնակիցների թիվը 23/*

Հայաստանի աշխարհագրություն և կենսաբանություն առարկաների շրջանակներում իրականացվող՝ ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ նախագծային աշխատանքի շրջանակում, «Դիլիջան» ազգային պարկ» են այցելել Սարիգյուղի Համլետ Աթաբեկյանի անվան միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտները:

Այցի ընթացքում ազգային պարկի գիտական բաժնի աշխատակիցները սահապատկերների և դիտակտիկ նյութերի միջոցով աշակերտներին ներկայացվել են «Դիլիջան» ազգային պարկի հարուստ կենսաբազմազանությունը, բուսական և կենդանական աշխարհը, Կարմիր գրքում ընդգրկված տեսակները, ինչպես նաև բնության պահպանության կարևորությունը: Աշակերտները ծանոթացել են ազգային պարկի գործունեությանը, էկոտուրիզմի զարգացման ուղղություններին և ԴԱՊ-ի էկոկրթական ծրագրերին՝ ձեռք բերելով նոր գիտելիքներ հայրենի բնաշխարհի պահպանության վերաբերյալ: Դասընթացն ամփոփվել է «Ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն» այցով, որն աշակերտների համար դարձավ բնությանը մոտ լինելու և վայրի կենդանիներին ավելի լավ ճանաչելու յուրահատուկ հնարավորություն:







Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտներ */ մասնակիցների թիվը 7/*

Կենսաբազմազանության միջազգային օրվան ընդառաջ, Հայաստանի աշխարհագրություն և կենսաբանություն առարկաների շրջանակներում իրականացվող «Գոտիականություններում կենսաբազմազանության տարածվածությունը» նախագծային աշխատանքի շրջանակում, «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտական բաժնի աշխատակիցները հյուրընկալել են Կոտայքի մարզի Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտներին: Էկոկրթական դասընթացը հագեցած էր հետաքրքիր ինտերակտիվ խաղերով և բացահայտումներով, որոնց ընթացքում աշակերտները ծանոթացան՝

- ✓ «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանության պահպանության կարևորությանը,
- ✓ Կարմիր գրքում գրանցված տեսակներին,
- ✓ ազգային պարկի էկոտուրիստական հնարավորություններին և զարգացման ուղղություններին:






Դիլիջանի թիվ 4 դպրոց-ի 9-րդ դասարանի աշակերտներ */ մասնակիցների թիվը 13/*

Կենսաբազմազանության միջազգային օրվա շրջանակներում «Դիլիջան» ազգային պարկի «Շամախյան» տեղամաս մասնաճյուղում անց է կացվել ծառատունկ, որը դարձավ բնության ու երիտասարդ սերնդի գեղեցիկ համագործակցության խորհրդանիշ: Ծառատունկին մասնակցել են Դիլիջանի թիվ 4 դպրոց-ի 9-րդ դասարանի աշակերտները՝ ազգային պարկի աշխատակիցների հետ միասին: Համատեղ ուժերով տնկվել է հացենի (Fraxinus) տեսակի շուրջ 200 տնկի:





Դիլիջանի թիվ 4 դպրոց-ի 2-րդ դասարանի աշակերտներ */ մասնակիցների թիվը 27/*

Կենսաբազմազանության միջազգային օրվա շրջանակներում Կովկասյան ազնվացեղ եղջերուների կենտրոնի հարակից տարածքում տեղի ունեցավ թռչնաբների տեղադրում, որին մասնակցեցին Դիլիջանի թիվ 4 դպրոց-ի 2-րդ դասարանի աշակերտները՝ ազգային պարկի աշխատակիցների ուղեկցությամբ: Փոքրիկները մեծ սիրով ու պատասխանատվությամբ տեղադրել են իրենց պատրաստած թռչնաբները՝ ևս մեկ փոքրիկ, բայց շատ կարևոր քայլ անելով բնության պահպանության ճանապարհին: Միջոցառման ընթացքում երեխաները ծանոթացել են թռչունների կարևոր դերին և սովորեցին, թե ինչպես կարելի է հոգ տանել մեր փետրավոր բարեկամների մասին:





Գոշի հիմնական դպրոցի աշակերտներ և ԴԱՊ-ի էկոխմբակի սաներ

/ մասնակիցների թիվը 30/

Շրջակա միջավայրի համաշխարհային օրվա շրջանակներում Գոշի հիմնական դպրոցում անցկացվեց ճանաչողական և կրթական սեմինար դպրոցականների համար, որը կազմակերպվել էր «Դիլիջան» ազգային պարկի, Երևանի պետական համալսարանի և Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտաշխատող, կենսաբանական գիտությունների թեկնածու Ռուզաննա Կիմի Պետրոսյանի նախաձեռնությամբ: Միջոցառումը նվիրված էր «Անհետացման եզրին գտնվող ժայռային մողես՝ Ռոստոմբեկովի (Darevskia rostombekowi) պահպանությունը» թեմային: Դպրոցականները ծանոթացան տեսակի կենսաբանական առանձնահատկություններին, տարածման արեալին, ինչպես նաև այն սպառնալիքներին, որոնք կարող են վտանգել նրա գոյությունը և հանգեցնել անհետացման: Սեմինարի ընթացքում առանձնահատուկ ուշադրություն դարձվեց կենսաբազմազանության պահպանության և բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորման կարևորությանը: Աշակերտները ակտիվորեն մասնակցեցին քննարկումներին, հետաքրքրությամբ հարցեր ուղղեցին մասնագետներին և կիսվեցին իրենց դիտարկումներով: Սեմինարից հետո մասնակիցների համար կազմակերպվել է գիտաճանաչողական արշավ դեպի Աղավնավանք, որի ընթացքում նրանք հնարավորություն ունեցան բնության մեջ անմիջականորեն ծանոթանալու տարածաշրջանի կենսաբազմազանությանը:









Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանողներ */ մասնակիցների թիվը 25/*

Հայաստանի ամերիկյան համալսարանի «Կենսաբազմազանության պահպանություն և վերականգնում» (ESS 250: Biodiversity Conservation and Restoration) դասընթացի ուսանողները, կ.գ.դ., դասախոս Արսեն Գասպարյանի գլխավորությամբ, այցելել են «Դիլիջան» ազգային պարկ՝ մասնակցելու դաշտային ուսումնաճանաչողական այցի:

Այցի շրջանակում ուսանողները BioBlitz ձևաչափով ուսումնասիրել են «Թաքնված ջրվեժ» բնաճանաչողական արահետի կենսաբազմազանությունը՝ օգտագործելով iNaturalist հավելվածը: Նրանք գրանցել են բույսերի, կենդանիների, սնկերի և այլ օրգանիզմների բազմաթիվ դիտարկումներ՝ նպաստելով քաղաքացիական գիտության զարգացմանն ու կենսաբազմազանության մոնիթորինգին:

Ուսանողները հանդիպել են նաև «Դիլիջան» ազգային պարկի մասնագետներին, որոնք ներկայացրել են ազգային պարկի գործունեությունը, կենսաբազմազանության պահպանության ուղղությամբ իրականացվող ծրագրերը, ինչպես նաև պահպանվող տարածքների կառավարման առանձնահատկությունները: Այցի ավարտին խումբն այցելել է «Կովկասյան ազնվացեղ եղջերվի բազմացման կենտրոն», որտեղ ծանոթացել է ազնվացեղ եղջերվի բազմացման և վերաբնակեցման ծրագրին, ինչպես նաև կենտրոնի գործունեությանն ու իրականացվող աշխատանքներին:



Երևանի Է. Թելմանի անվան հ. 13 հիմնական դպրոց */ մասնակիցների թիվը 13/*

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ են այցելել Երևանի Է. Թելմանի անվան հ. 13 հիմնական դպրոցի սովորողներին, ովքեր մասնակցում են «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Սմարթ էկրաններ Աշխարհացույցի դպրոցներին 2026» մրցութային ծրագրին՝ «Քարտեզագրելով Հայաստանի բնության ապագան. ՀՀ բնության

հատուկ պահպանվող տարածքներ և դրանց դերն ու նշանակությունը կենսաբազմազանության մեջ. Ազգային պարկեր» թեմայով:

Այցի շրջանակում ազգային պարկի գիտական բաժնի մասնագետները անցկացրել են ճանաչողական դասընթաց՝ ներկայացնելով Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգը, ազգային պարկերի նշանակությունը, «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը, պահպանվող բուսական և կենդանական աշխարհը, ինչպես նաև բնության պահպանության կարևորությունը:

Ծրագրի գործնական հատվածում աշակերտներն այցելել են Կովկասյան ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն, որտեղ ծանոթացել են կենտրոնի գործունեությանը, ազնվացեղ եղջերուների պահպանության և բազմացման աշխատանքներին, ինչպես նաև Հայաստանում այս արժեքավոր տեսակի վերականգնմանն ուղղված ծրագրերին:






Դիլիջանի գեղարվեստի ակադեմիա */ մասնակիցների թիվը 4/*

«Դիլիջան» ազգային պարկի գիտական բաժնի աշխատակիցների հետ համատեղ Դիլիջանի գեղարվեստի ակադեմիայի մի խումբ դասախոս-արվեստագետներ իրականացրել են ծաղկաբույսերի դաշտային մոնիթորինգ՝ ուսումնասիրելով բուսատեսակների տեսակային կազմը, տարածվածությունը, ծաղկման փուլերը, աճելավայրերի առանձնահատկությունները և պահպանական նշանակություն ունեցող տեսակների վիճակը:

Դաշտային աշխատանքներին զուգահեռ մասնակիցները քննարկել են գիտության, բնապահպանության և արվեստի փոխգործակցության հնարավորությունները, փորձի փոխանակում իրականացրել կենսաբազմազանության պահպանության, բնապահպանական կրթության և հանրային իրազեկման ոլորտներում, ինչպես նաև ծանոթացել ազգային պարկի հարուստ բնական ժառանգությանը:



Մարգահովիտի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի ներառական կրթություն սպացող սովորողները ԴԱՊ-ում */ մասնակիցների թիվը 8/*

Մարգահովիտի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի ներառական կրթություն ստացող սովորողները՝ ուսուցչի օգնական Գայանե Սարուխանյանի նախաձեռնությամբ, այցելել են «Դիլիջան» ազգային պարկի Կովկասյան ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոն: Այցի ընթացքում աշակերտները ծանոթացել են ազնվացեղ եղջերուներին, նրանց կենսակերպին, խնամքին և բազմացման կենտրոնի գործունեությանը:



Դիլիջանի համար վեց հիմնական դպրոցի 6-7-րդ դասարանների աշակերտներ /մասնակիցների թիվը 24/

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի աշխատակիցները Դիլիջանի համար վեց հիմնական դպրոցի 6-7-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպել են ճանաչողական և ուսուցողական արշավ դեպի Թաքնված ջրվեժ: Արշավի ընթացքում աշակերտները հնարավորություն ունեցել են ծանոթանալու «Դիլիջան» ազգային պարկի անտառային էկոհամակարգերին: Երեխաները նաև ուսումնասիրել են արշավային արահետի երկայնքով տեղադրված տեղեկատվական և ուղղորդող ցուցանակները, նշանները՝ ծանոթանալով դրանց նշանակությանը և ներկայացվող տեղեկատվությանը:









Դիտավանի հիմնական դպրոց / մասնակիցների թիվը 13/

Դիտավանի հիմնական դպրոցի 7-9-րդ դասարանների աշակերտներն այցելել են «Դիլիջան» ազգային պարկ՝ «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Սմարթ-էկրաններ աշխարհացույցի դպրոցներին 2026» խորագիրը կրող մրցույթի շրջանակում: Դպրոցը մրցույթի շրջանակում իրականացնում է «Տավուշի մարզի անհետացող տեսակները» թեմայով հետազոտական աշխատանք, որի նպատակն է ուսումնասիրել Տավուշի մարզի կենսաբազմազանությունը, ներկայացնել հազվագյուտ և անհետացող տեսակները, ինչպես նաև անդրադառնալ դրանց պահպանության անհրաժեշտությանը: Այցի շրջանակում «Դիլիջան» ազգային պարկի մասնագետների կողմից աշակերտների համար կազմակերպվել է կրթական դասընթաց: Դասընթացի ընթացքում ներկայացվել են «Դիլիջան» ազգային պարկի տարածքի կենսաբազմազանությունը, բուսական և կենդանական աշխարհի առանձնահատկությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում ընդգրկված տեսակները:

Աշակերտներին ներկայացվել են նաև կենսաբազմազանության պահպանության նշանակությունը, հազվագյուտ և անհետացող տեսակների նկատմամբ առկա հիմնական սպառնալիքները և բնության հատուկ պահպանվող տարածքների դերը դրանց պահպանության գործում:

Կրթական հանդիպումը հնարավորություն է տվել աշակերտներին ստանալ լրացուցիչ մասնագիտական տեղեկատվություն, ծանոթանալ ազգային պարկի կողմից իրականացվող պահպանական և ուսումնասիրության աշխատանքներին և ստացված գիտելիքներն ու նյութերն օգտագործել իրենց հետազոտական աշխատանքում:





«Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի, գիտական բաժնի, 2026թվականի 9 ամիսների ընթացքում բնակչության էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված դասընթացներ

	Ամսաթիվ	Դասընթացի թեման	Կրթական հաստատություն	Մասնակիցների թիվ
1	05.02.2026թ	Դասընթացի ընթացքում ներկայացվել է «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներն ու կենդանատեսակները, անդրադարձ է կատարվել բնության մեջ մարդու վարվելականոններին, ինչպես նաև բնության պահպանության կարևորությանը:	***Գոշի հիմնական դպրոց***	**22**
2	13.02.2026թ	Այցելության շրջանակներում 5-8-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպվել և ներկայացրել են ինտերակտիվ, բնապահպանական, էկոկրթական դասընթաց սեմինար, հագեցած գիտելիքների ստուգման խաղերով, որի շրջանակներում ներկայացվել են հետևյալ թեմաներով սահապատկերներ.ՀՀ Կարմիր գիրք: Կարմիր գրքային տեսակները «Դիլիջան» ազգային պարկում ✓ Անտառ, ծառահատումներ և դրանց հետևանքները	***Խաչարծանի միջնակարգ դպրոց***	**25**
3	20.02.2026թ	Աշակերտների համար իրականացվել է սեմինար-քննարկում, «Դիլիջան համայնքում անտառահատման վտանգները և ինչպես աջակցել Դիլիջանի կենսաբազմազանության ապահովմանը» նախագծային աշխատանքի իրականացման շրջանակներում: Կազմակերպվել է քննարկում ազգային պարկում հնարավոր ծառահատումների և դրա հետևանքների վերաբերյալ: Աշակերտների կողմից հնչեցված հարցերին տրվել են սպառիչ պատասխաններ: Ինչպես նաև քննարկվել են կենսաբազմազանության կարևորության և դրա պահպանությանն ուղղված ծրագրերն ու միջոցառումները:	***Դիլիջանի Ավագ դպրոց***	**15**
4	03.03.2026թ	«Վայրի բնության ապագան մեր ձեռքերում է» «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը, կարմիր գրքային տեսակները, դրանց պահպանության և պաշտպանության անհրաժեշտությունը: «Մարդ – բնություն փոխհարաբերություն»	***Դիլիջանի թիվ վեց հիմնական դպրոց***	**23**
5	20.03.2026թ	Այցի շրջանակում մասնագիտական կողմնորոշման խմբակի անդամների համար կազմակերպվել է էկոկրթական դասընթաց-քննարկում, որի ընթացքում ներկայացվել և քննարկվել են հետևյալ թեմաները՝ Անտառների դերը և դրանց պահպանության կարևորությունը Ծառահատումների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա Անտառագետի մասնագիտությունը և դրա կարևոր առաքելությունը	***Դիլիջանի թիվ վեց հիմնական դպրոց-մասնագիտական կողմնորոշման խմբակի անդամներ***	**27**
6	14.04.2026թ	«Դիլիջան» ազգային պարկի գիտական բաժնի աշխատակիցները Դիլիջանի թիվ 4 դպրոցի 6–8-րդ դասարանների աշակերտների համար, ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Անվտանգ և ապահով կրթական միջավայր» տարվա կարգախոսի շրջանակներում, անցկացրել են դասընթաց՝ «Հրդեհներ, սողանքներ և բնապահպանական անվտանգություն» թեմայով: Դասընթացի ընթացքում ներկայացվել են բնական աղետները, դրանց առաջացման պատճառները և հնարավոր հետևանքները:	***Դիլիջանի թիվ 4 դպրոցի 6–8-րդ դասարանների աշակերտներ***	**56**

7	18.04.2026թ	Դասընթացը անց է կացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Անվտանգ և ապահով կրթական միջավայր» կարգախոսի շրջանակում ՝ «Հրդեհներ, սողանքներ և բնապահպանական անվտանգություն» թեմայով: Որի շրջանակներում ներկայացվել է բնական աղետների առաջացման պատճառները, դրանց հնարավոր հետևանքները տարբեր իրավիճակներում:	***Դիլիջանի ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտներ***	**68**
8	05.05.2026թ	«Դիլիջան» ազգային պարկում հյուրընկալվել են Դիլիջանի թիվ 4 հիմնական դպրոցի «պատանի կենսաբաններ» խմբակի սաները: Խմբակի սաների համար կազմակերպվել է բաց քննարկում հետևյալ թեմաներով.«Դիլիջան» ազգային պարկի գործունեությունն ու նպատակը, «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը, ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքային տեսակները:	***Դիլիջանի թիվ 4 դպրոցի պատանի կենսաբանները***	**14**
9	07.05.2026թ	7-րդ և 9-րդ դասարանների աշակերտները ազգային պարկ էին այցելել «Բույսերի դերը մեր կյանքում. Բնական ներկեր» և ՝ «Դեղաբույսերի օգտագործումը բժշկության մեջ» թեմաներով նախագծային աշխատանքների իրականացման շրջանակներում: Աշակերտների համար կազմակերպվել է բաց քննարկում-դասընթաց հետևյալ թեմաներով. ✓ «Դիլիջան» ազգային պարկի գործունեությունն ու նպատակը, ✓ «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը, ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքային տեսակները ✓ «Դիլիջան» ազգային պարկի դեղաբույսերը և դրանց կիրառումը	***Վանաձորի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 15 հիմնական դպրոց***	**20**
10	11.05.2026թ	Դիլիջանի ավագ դպրոց 12-րդ դասարանի աշակերտների համար իրականացվել է դասընթաց-քննարկում սնկերի թեմայով: Աշակերտներն ազգային պարկ էին այցելել նախագծային աշխատանքի շրջանակներում՝ կենսաբանության ուսուցչուհի Ս. Սարուխանյանի գլխավորությամբ: Դասընթացի ընթացքում ներկայացվել են սնկերի կառուցվածքային առանձնահատկությունները, ագարիկոմիցետների, աֆիլոֆորային և գաստերոմիցետների հիմնական խմբերը:	***Դիլիջանի ավագ դպրոց 12-րդ դասարանի աշակերտներ***	**8**
11	13.05.2026թ	Աշակերտների համար կազմակերպվել է հետաքրքիր և ուսուցողական էկոկրթական դասընթաց-քննարկում, որի ընթացքում սահապատկերների միջոցով բացահայտել են «Դիլիջան» ազգային պարկի հարուստ կենսաբազմազան աշխարհը՝ ծանոթանալով մեր անտառների բուսական ու կենդանական եզակի տեսակներին:Աշակերտները մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրել ՀՀ Բույսերի և Կենդանիների Կարմիր գիրքը, հերբարիումային նմուշները, լսել բնության մասին հետաքրքրաշարժ պատմություններ և ակտիվորեն մասնակցել հարցուպատասխանին ու ճանաչողական խաղերին:	***Դիլիջանի թիվ 4 հիմնական դպրոցի 3-րդ դասարանի աշակերտներ***	**27**
12	19.05.2026թ	Հայաստանի աշխարհագրություն և կենսաբանություն առարկաների շրջանակներում իրականացվող՝ ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ նախագծային աշխատանքի շրջանակում, «Դիլիջան» ազգային պարկ» են այցելել Սարիգյուղի Համլետ Աթաբեկյանի անվան միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտները: Այցի ընթացքում ազգային պարկի գիտական բաժնի աշխատակիցները սահապատկերների և դիտակտիկ նյութերի միջոցով աշակերտներին ներկայացվել են «Դիլիջան» ազգային պարկի հարուստ կենսաբազմազանությունը, բուսական և կենդանական աշխարհը, Կարմիր գրքում ընդգրկված տեսակները, ինչպես նաև բնության պահպանության կարևորությունը:	***Սարիգյուղի Համլետ Աթաբեկյանի անվան միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտներ***	**23**
13	20.05.2026թ	Կենսաբազմազանության միջազգային օրվան ընդառաջ, Հայաստանի աշխարհագրություն և կենսաբանություն առարկաների շրջանակներում իրականացվող «Գոտիականություններում կենսաբազմազանության տարածվածությունը» նախագծային աշխատանքի շրջանակում, «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտական բաժնի աշխատակիցները հյուրընկալել են Կոտայքի մարզի Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտներին: աշակերտները ծանոթացան՝«Դիլիջան»	***Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոցի 9-րդ***	**7**

		ազգային պարկի կենսաբազմազանության պահպանության կարևորությանը, Կարմիր գրքում գրանցված տեսակներին,ազգային պարկի էկոտուրիստական հնարավորություններին և զարգացման ուղղություններին:	***դասարանի աշակերտներ***	
14	22.05.2026թ	Կենսաբազմազանության միջազգային օրվա շրջանակներում «Դիլիջան» ազգային պարկի «Շամախյան» տեղամաս մասնաճյուղում անց է կացվել ծառատունկ, որը դարձավ բնության ու երիտասարդ սերնդի գեղեցիկ համագործակցության խորհրդանիշ: Ծառատունկին մասնակցել են Դիլիջանի թիվ 4 դպրոց-ի 9-րդ դասարանի աշակերտները՝ ազգային պարկի աշխատակիցների հետ միասին: Համատեղ ուժերով տնկվել է հացենի (Fraxinus) տեսակի շուրջ 200 տնկի:	***Դիլիջանի թիվ 4 դպրոց-ի 9-րդ դասարանի աշակերտներ***	**13**
15	22.05.2026թ	Կենսաբազմազանության միջազգային օրվա շրջանակներում Կովկասյան ազնվացեղ եղջերուների կենտրոնի հարակից տարածքում տեղի ունեցավ թռչնաբների տեղադրում, որին մասնակցեցին Դիլիջանի թիվ 4 դպրոց-ի 2-րդ դասարանի աշակերտները՝ ազգային պարկի աշխատակիցների ուղեկցությամբ: Աշակերտները տեղադրել են իրենց պատրաստած թռչնաբները՝ ևս մեկ փոքրիկ, բայց շատ կարևոր քայլ անելով բնության պահպանության ճանապարհին: Միջոցառման ընթացքում երեխաները ծանոթացել են թռչունների կարևոր դերին և սովորեցին, թե ինչպես կարելի է հոգ տանել մեր փետրավոր բարեկամների մասին:	***Դիլիջանի թիվ 4 դպրոց-ի 2-րդ դասարանի աշակերտներ***	**27**
16	05.06.2026թ	Շրջակա միջավայրի համաշխարհային օրվա շրջանակներում Գոշի հիմնական դպրոցում անցկացվեց ճանաչողական սեմինար, որը կազմակերպվել էր «Դիլիջան» ազգային պարկի, Երևանի պետական համալսարանի և Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտաշխատող, կենսաբանական գիտությունների թեկնածու Ռուզաննա Կիմի Պետրոսյանի նախաձեռնությամբ: Միջոցառումը նվիրված էր «Անհետացման եզրին գտնվող ժայռային մողես՝ Ռոստոմբեկովի (Darevskia rostombekowi) պահպանությունը» թեմային:	***Գոշի հիմնական դպրոցի աշակերտներ և ԴԱՊ-ի էկոխմբակի սաներ***	**30**
17	02.07.2026թ	Հայաստանի ամերիկյան համալսարանի «Կենսաբազմազանության պահպանություն և վերականգնում» (ESS 250: Biodiversity Conservation and Restoration) դասընթացի ուսանողները, կ.գ.դ., դասախոս Արսեն Գասպարյանի գլխավորությամբ, այցելել են «Դիլիջան» ազգային պարկ՝ մասնակցելու դաշտային ուսումնաճանաչողական այցի: Այցի շրջանակում ուսանողները BioBlitz ձևաչափով ուսումնասիրել են «Թաքնված ջրվեժ» բնաճանաչողական արահետի կենսաբազմազանությունը՝ օգտագործելով iNaturalist հավելվածը: Նրանք գրանցել են բույսերի, կենդանիների, սնկերի և այլ օրգանիզմների բազմաթիվ դիտարկումներ՝ նպաստելով քաղաքացիական գիտության զարգացմանն ու կենսաբազմազանության մոնիթորինգին: Ուսանողները հանդիպել են նաև «Դիլիջան» ազգային պարկի մասնագետներին, որոնք ներկայացրել են ազգային պարկի գործունեությունը, կենսաբազմազանության պահպանության ուղղությամբ իրականացվող ծրագրերը, ինչպես նաև պահպանվող տարածքների կառավարման առանձնահատկությունները: Այցի ավարտին խումբն այցելել է «Կովկասյան ազնվացեղ եղջերվի բազմացման կենտրոն», որտեղ ծանոթացել է ազնվացեղ եղջերվի բազմացման և վերաբնակեցման ծրագրին, ինչպես նաև կենտրոնի գործունեությանն ու իրականացվող աշխատանքներին:	***Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանողներ***	**25**
18	14.07.2026թ	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ են այցելել Երևանի Է. Թելմանի անվան հ. 13 հիմնական դպրոցի սովորողներին, ովքեր մասնակցում են «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Սմարթ էկրաններ Աշխարհացույցի դպրոցներին 2026» մրցութային ծրագրին՝ «Քարտեզագրելով Հայաստանի	***Երևանի Է. Թելմանի անվան հ. 13***	**13**

		բնության ապագան. ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներ և դրանց դերն ու նշանակությունը կենսաբազմազանության մեջ. Ազգային պարկեր» թեմայով: Այցի շրջանակում ազգային պարկի գիտական բաժնի մասնագետները անցկացրել են ճանաչողական դասընթաց՝ ներկայացնելով Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգը, ազգային պարկերի նշանակությունը, «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը, պահպանվող բուսական և կենդանական աշխարհը, ինչպես նաև բնության պահպանության կարևորությունը:	***հիմնական դպրոց***	
19	17.07.2026թ	«Դիլիջան» ազգային պարկի գիտական բաժնի աշխատակիցների հետ համատեղ Դիլիջանի գեղարվեստի ակադեմիայի մի խումբ դասախոս-արվեստագետներ իրականացրել են ծաղկաբույսերի դաշտային մոնիթորինգ՝ ուսումնասիրելով բուսատեսակների տեսակային կազմը, տարածվածությունը, ծաղկման փուլերը, աճելավայրերի առանձնահատկությունները և պահպանական նշանակություն ունեցող տեսակների վիճակը: Դաշտային աշխատանքներին զուգահեռ մասնակիցները քննարկել են գիտության, բնապահպանության և արվեստի փոխգործակցության հնարավորությունները, փորձի փոխանակում իրականացրել կենսաբազմազանության պահպանության, բնապահպանական կրթության և հանրային իրազեկման ոլորտներում, ինչպես նաև ծանոթացել ազգային պարկի հարուստ բնական ժառանգությանը:	***Դիլիջանի գեղարվեստի ակադեմիա***	**4**
20	08.09.2026թ	Մարգահովիտի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի ներառական կրթություն ստացող սովորողները՝ ուսուցչի օգնական Գայանե Սարուխանյանի նախաձեռնությամբ, այցելել են «Դիլիջան» ազգային պարկի Կովկասյան ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոն: Այցի ընթացքում աշակերտները ծանոթացել են ազնվացեղ եղջերուներին, նրանց կենսակերպին, խնամքին և բազմացման կենտրոնի գործունեությանը:	***Մարգահովիտի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի ներառական կրթություն ստացող սովորողներ***	**8**
21	24.09.2026թ	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի աշխատակիցները Դիլիջանի համար վեց հիմնական դպրոցի 6-7-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպել են ճանաչողական և ուսուցողական արշավ դեպի Թաքնված ջրվեժ: Արշավի ընթացքում աշակերտները հնարավորություն ունեցել են ծանոթանալու «Դիլիջան» ազգային պարկի անտառային էկոհամակարգերին: Երեխաները նաև ուսումնասիրել են արշավային արահետի երկայնքով տեղադրված տեղեկատվական և ուղղորդող ցուցանակները, նշանները՝ ծանոթանալով դրանց նշանակությանը և ներկայացվող տեղեկատվությանը:	***Դիլիջանի համար վեց հիմնական դպրոցի 6-7-րդ դասարանների աշակերտներ***	**24**
22	25.09.2026թ	Դիտավանի հիմնական դպրոցի 7-9-րդ դասարանների աշակերտներն այցելել են «Դիլիջան» ազգային պարկ՝ «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Սմարթ-էկրաններ աշխարհացույցի դպրոցներին 2026» խորագիրը կրող մրցույթի շրջանակում: Դպրոցը մրցույթի շրջանակում իրականացնում է «Տավուշի մարզի անհետացող տեսակները» թեմայով հետազոտական աշխատանք, որի նպատակն է ուսումնասիրել Տավուշի մարզի կենսաբազմազանությունը, ներկայացնել հազվագյուտ և անհետացող տեսակները, ինչպես նաև	***Դիտավանի հիմնական դպրոց***	**13**

		անդրադառնալ դրանց պահպանության անհրաժեշտությանը: Այցի շրջանակում «Դիլիջան» ազգային պարկի մասնագետների կողմից աշակերտների համար կազմակերպվել է կրթական դասընթաց: Դասընթացի ընթացքում ներկայացվել են «Դիլիջան» ազգային պարկի տարածքի կենսաբազմազանությունը, բուսական և կենդանական աշխարհի առանձնահատկությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում ընդգրկված տեսակները:		
	Մասնակիցների թիվը 1-ին եռամսյակի ընթացքում			**112**
	Մասնակիցների թիվը 2-րդ եռամսյակի ընթացքում			**293**
	Մասնակիցների թիվը 3-րդ եռամսյակի ընթացքում			**87**
	Միջոցառումների թիվը 1-ին եռամսյակի ընթացքում			**5**
	Միջոցառումների թիվը 2-րդ եռամսյակի ընթացքում			**11**
	Միջոցառումների թիվը 3-րդ եռամսյակի ընթացքում			**6**
	Միջոցառումների ընդհանուր թիվը / 9 ամիսներ/			**22**
	Մասնակիցների ընդհանուր թիվը / 9 ամիսներ/			**492**

Զբոսաշրջային ծառայությունների մատուցում

2026 թվականի 9 ամիսների ընթացքում այցելուների կենտրոն են այցելել 233 զբոսաշրջիկ, որից 147-ը՝ 3-րդ եռամսյակի ընթացքում: Այցելուները ստացել են տեղեկատվություն և խորհրդատվություն ԴԱՊ-ի էկոտուրիստական հնարավորությունների, ենթակառուցվածքների և էկոերթուղիների վերաբերյալ:

	A	B	C	D	E	F	G	H
1	Հ/Հ	Օր/ամիս/տարի	Այցելուների թիվը	Այցելուների երկիրը	Այցելուների սեռը		Այցելուների տարիքը /մոտավոր/	Այցելության վայրը
2					արական	իգական		
492		09.01.2026	2	Վրաստան	1	1	20-25	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
493		13.01.2026	3	Ռուսաստան	1	2	20-35	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
494		14.01.2026	2	Հայաստան	2	1	30-40	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
495		23.01.2026	2	Ռուսաստան	1	1	20-30	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
496		27.01.2026	2	Հայաստան	1	1	15-20, 30-40	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
497		29.01.2026	1	Ռուսաստան	1		45-50	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
498		04.02.2026	2	Հայաստան	1	1	25-35	Գոշավանք
499		05.02.2026	2	Ռուսաստան	1	1	30-35	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
500		10.02.2026	2	Ռուսաստան	1	1	5, 35-40	Հաղարծին, Պարզ լիճ
501		16.02.2026	2	գերմանիա	1	1	30-40	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
502		04.03.2026	2	Հայաստան	1	1	10-15,30-35	Թաքնված ջրվեժի արահետ
503		13.03.2026	4	Հունգարիա	2	2	10-15, 30-40	Թաքնված ջրվեժի արահետ
504		29.03.2026	3	Ռուսաստան	1	2	30-40	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
505			29					
506								
507								
508								

A	B	C	D	E	F	G	H
Հ/Հ	Օր/ամիս/տարի	Այցելուների թիվը	Այցելուների երկիրը	Այցելուների սեռը		Այցելուների տարիքը /մոտավոր/	Այցելության վայրը
				արական	իգական		
	09.01.2026	2	Վրաստան	1	1	20-25	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
	13.01.2026	3	Ռուսաստան	1	2	20-35	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
	14.01.2026	2	Հայաստան	2	1	30-40	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
	23.01.2026	2	Ռուսաստան	1	1	20-30	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
	27.01.2026	2	Հայաստան	1	1	15-20, 30-40	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
	29.01.2026	1	Ռուսաստան	1		45-50	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
	04.02.2026	2	Հայաստան	1	1	25-35	Գոշավանք
	05.02.2026	2	Ռուսաստան	1	1	30-35	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
	10.02.2026	2	Ռուսաստան	1	1	5, 35-40	Հաղարծին, Պարզ լիճ
	16.02.2026	2	գերմանիա	1	1	30-40	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
	04.03.2026	2	Հայաստան	1	1	10-15,30-35	Թաքնված ջրվեժի արահետ
	13.03.2026	4	Հունգարիա	2	2	10-15, 30-40	Թաքնված ջրվեժի արահետ
	29.03.2026	3	Ռուսաստան	1	2	30-40	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
	09.04.2026	7	Հայաստան			15-17 20-30	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
	13.04.2026	4	Հնդկաստան	1		24	Բյուրեղյա արահետ
	17.04.2026	6	Իսպանիա, Հայաստան	3	6	30 40-45	Թաքնված ջրվեժի արահետ
	22.04.2026	8	Ռուսաստան	1		30-45	Ապակեքարի արահետ
	27.04.2026	6	Ռուսաստան	1	1	20-30	Երկնքի հայելու արահետ
	11.05.2026	2	Հայաստան	1	1	31, 34	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
	20.05.2026	5	Հնդկաստան	1	4	18-35	Միջնադարյան վանքերի արահետ
	28.05.2026	3	Ռուսաստան	2	1	19-24	Վանականի արահետ
	02.06.2026	7	Հունգարիա	2	5	25-30	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
	05.06.2026	4	Հայաստան	4	0	7, 18 30-40	Թաքնված ջրվեժի արահետ
	08.06.2026	5	Հայաստան	6	5	20-30	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
		86					

A	B	C	D	E	F	G	H
Հ/Հ	Օր/ամիս/տարի	Այցելուների թիվը	Այցելուների երկիրը	Այցելուների սեռը		Այցելուների տարիքը /մոտավոր/	Այցելության վայրը
				արական	իգական		
144	10.07.2026	3	Գերմանիա	2	1	40-45	Պանորամա արահետ
145	10.07.2026	30	Աղավնավանք	10	20	40-45	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
146	15.07.2026	4	Ճապոնիա	3	1	35-40,1-1.5	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
147	16.07.2026	8	Ռուսաստան	6	2	30-40	Ծշնջացող ջրվեժ
148	19.07.2026	2	Վրաստան	1	1	40-45,10-15	ԴԱՊ
149	22.07.2026	14	Հայաստան	7	7	30-35	Թաքնված ջրվեժի արահետ
150	25.07.2026	6	Հունգարիա	2	4	10-15,35-40	Ծշնջացող ջրվեժ
151	28.07.2026	7	Նորվեգիա	3	4	30-40	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
152	08.08.2026	1	Ամերիկա	1		40-45,10-15	Ծշնջացող ջրվեժ
153	13.08.2026	3	Մեքսիկա	2	1	30-35	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
154	15.08.2026	23	Հայաստան	10	13	10-15,35-40	Ծշնջացող ջրվեժ
155	16.08.2026	4	Հնդկաստան	2	2	50-55	Հին Դիլիջան, Հաղարծին
156	21.08.2026	1	Հայաստան-Գյումրի	1		30-35	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
157	28.08.2026	2	ԱՄՆ		2	30-35	Երեք գագաթների արահետ
158	29.08.2026	6	Գերմանիա	1	5	30-35	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
159	31.08.2026	7	Հայաստան	2	5	25-30	ԴԱՊ
160	03.09.2026	1	Կանադա		1	10-15,35-40	Ծշնջացող ջրվեժ
161	03.09.2026	1	Գերմանիա		1	35-40	Թաքնված ջրվեժի արահետ
162	04.09.2026	6	Կանադա	2	4	5-10,30-35	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
163	07.09.2026	2	Մոսկվա	2		30-35	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
164	07.09.2026	5	Հայաստան	5		40-45,15-20	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
165	07.09.2026	4	Հայաստան		4	30-35	Ծշնջացող ջրվեժ
166	07.09.2026	6	ԴԴ	3	3	30-50	Ծշնջացող ջրվեժ
167	22.09.2026	1	Գերմանիա		1	25-30	Ծշնջացող ջրվեժ
		147					

ԴԱՊ-ի առավել ակտիվ ռեկրեացիոն գոտիների և էկոերթուղիների առկա իրավիճակի գնահատում, մոնիթորինգ

2026 թվականի 9 ամիսների ընթացքում «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի 25 էկոտուրիստական երթուղիներում՝ Թաքնված ջրվեժ, Կենու պուրակ, Պարզ լճի շրջանաձև արահետի, Տրանսկովկասյան արահետի տաբեր հատվածներում և այլն իրականացվել են շրջայցեր երթուղիների առկա և տեխնիկական վիճակի գնահատման նպատակով: 2026 թվականի հաշվետու ժամանակահատվածում «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի էկոտուրիստական երթուղիներում իրականացվել են շրջայցեր երթուղիների առկա և տեխնիկական վիճակի գնահատման նպատակով:Ինչպե նաև իրականացվել են վերանորոգման, թարմացման աշխատանքներ:

Տվյալները ներկայացված է 30.09.2026 թ դրությամբ.

- «Ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն» 2026 թվականի 9 ամսների ընթացքում այցելել են 33 713 և ավելի զբոսաշրջիկ, որից 19 713 և ավելի զբոսաշրջիկը՝ 3-րդ եռամսյակի ընթացքում:
- «Ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն»-ից 9 ամիսների ընթացքում ստացվել է 16 856,7 հազ. դրամ եկամուտ, որից 9 856, 9 հազ. դրամ՝ 3-րդ եռամսյակի ընթացքում:
- Պարզ լճի կայանատեղուց մուտքագրվել է 5 426,0 հազ. դրամ եկամուտ, որից 3 760, 3 հազ. դրամ՝ 3-րդ եռամսյակի ընթացքում: :

Հուշագրեր ունեցող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ շարունակական համագործակցություն

Փոխըմբռնման հուշագիր է կնքվել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և «Արահետներ փոփոխության համար» հասարակական կազմակերպության (Trails For Change NGO միջև: Հուշագիրը ստորագրել են «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Ալիխանյանը և «Արահետներ փոփոխության համար» ՀԿ-ի գործառնությունների և ծրագրերի մենեջեր Մերի Գրիգորյանը՝ նպատակ ունենալով ձևավորել երկարաժամկետ և բազմակողմանի համագործակցություն:

Համագործակցության շրջանակում նախատեսվում է ազգային պարկի տարածքում իրականացնել՝

• էկոտուրիստական երթուղիների և արահետների պլանավորում, նախագծում և զարգացում,

• կամուրջների և զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծում, բարեկարգում և կահավորում,

• ենթակառուցվածքների սպասարկման աշխատանքների կազմակերպում:

Բացի այդ, համագործակցությունը ներառում է՝

• կրթական և ճանաչողական ծրագրերի իրականացում,

• փորձի և մասնագիտական գիտելիքների փոխանակում,

• զբոսաշրջային միջոցառումների կազմակերպում և աջակցում,

• տեղացի և միջազգային կամավորների ներգրավմամբ վրանային կրթական ճամբարների կազմակերպում:

Նախաձեռնության նպատակն է ապահովել ազգային պարկի կայուն զարգացումը, խթանել էկոտուրիզմը և բարձրացնել բնապահպանական կրթության մակարդակը:





Արահետներ փոփոխության համար ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում 2026 թվականի 9 ամիսների ընթացքում իրականացվել են Տրանսկովկասյան արահետի Պարզ լճից դեպի Գոշ տանող հատվածի սպասարկման և կահավորման աշխատանքներ՝ փայտե կամրջի կառուցում: ՀԿ-ի կողմից իրականացվել է նաև «Թաքնված ջրվեժ» արահետի բարեկարգման, կամրջի վերանորոգման ևթարմացման աշխատանքներ:







«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների նախաձեռնությամբ և աշխատանքային գործունեության սահմաններում իրականացվել է Աղավնավանքի Կենու պուրակի արահետ տանող ճանապարհի կամրջի վերանորոգում: Ինչպես նաև Արահետներ փոփոխության համար ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում իրականացվել է արահետի վրա առկա նշանների, գծանշումների թարմացման աշխատանքներ:



Իրականացվել նաև Պարզ լճից Գոշ լիճ տանող արահետում առկա կամրջի վերանորոգման աշխատանք :



«Դիլիջան» ազգային պարկի տարածքում նախկին տարիների ընթացքում հրդեհված տարածքների մոնիթորինգ շարունակական աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում իրականացվել են նախկին տարիների ընթացքում արձանագրված հրդեհներից տուժած տարածքների հետհրդեհային տեղազննման և մոնիթորինգի աշխատանքներ: Աշխատանքներն իրականացվել են, այդ թվում՝ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի համապատասխան աշխատակիցների հետ համատեղ՝ նպատակ ունենալով գնահատել հրդեհների հետևանքով տարածքների էկոհամակարգային վիճակը, բուսածածկույթի վերականգնման ընթացքը և կենդանական աշխարհի կենսագործունեության հետքերը:

Մասնավորապես, ուսումնասիրվել են 2025 թվականի տարեվերջին բռնկված հրդեհներից տուժած՝ շուրջ 971,55 հա ընդհանուր մակերեսով տարածքները, ինչպես նաև հրդեհի ազդեցության ենթարկված ծառածածկ հատվածները: «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի 13-րդ, 35 քառակուսիներում /40⁰43'39"N 44⁰49'25"E/, /40⁰41'09,03"N 44⁰49'22,71"E/, իրականացվել են պարբերական շրջայցեր և տեղազննումներ, որոնց ընթացքում կատարվել են տարածքի տեսողական դիտարկումներ, հրդեհի հետևանքով վնասված բուսականության և ծառերի վիճակի գնահատում, լուսանկարահանում, ինչպես նաև հետագա վերլուծության և փաստագրման նպատակով անհրաժեշտ դաշտային նյութերի և տվյալների հավաքագրում:

Իրականացված դիտարկումների արդյունքում արձանագրվել է, որ ուսումնասիրված հատվածներում բուսածածկույթի ամբողջականության էական խախտումներ չեն արձանագրվել, իսկ որոշ տարածքներում դիտվում են բնական վերականգնման գործընթացներին բնորոշ բուսականության առկայություն և զարգացում: Դաշտային դիտարկումների ընթացքում արձանագրվել են կենդանական աշխարհի կենսագործունեության և տեղաշարժի հետքեր, ինչը վկայում է ուսումնասիրված տարածքներում կենդանական աշխարհի ներկայացուցիչների կենսագործունեության շարունակականության մասին:

Հավաքագրված լուսանկարները, դաշտային դիտարկումների արդյունքները և այլ նյութերը նախատեսվում է օգտագործել հրդեհներից տուժած տարածքների էկոհամակարգային վիճակի

հետագա գնահատման, բնական վերականգնման դինամիկայի դիտարկման և համապարփակ մոնիթորինգի իրականացման նպատակով: Հետհրդեհային տարածքների դիտարկման և մոնիթորինգի աշխատանքները կրում են շարունակական բնույթ և իրականացվելու են պարբերաբար՝ տարածքների բնական վերականգնման ընթացքի, բուսականության վիճակի և կենդանական աշխարհի ակտիվության փոփոխությունների գնահատման նպատակով:

Հավաքագրվել են նյութեր և տվյալներ «Շամախյան» տեղամասի 2-րդ պահաբաժնի 8-րդ / N40°46'33" E44°51'22"/, / N40°46'48" E44°51'21"/, և 9-րդ / N40°46'44,7" E44°51'28,8"/, քառակուսիներում: Նշված հատվածներում հրդեհի բռնկման պատճառը ուսումնական զորավարժանքներն են, քանի որ տարածքը գտնվում է հրաձգարանի մոտակայքում: Վերոնշյալ տարածքում հրդեհի դեպքեր հաճախակի են գրանցվում, պայմանավորված ուսումնական զորավարժանքներով:










Ընթացիկ աշխատանքների իրականացում

«Դիլիջան» ազգային պարկի աշխատակիցները մասնակցել են կենսաբազմազանության պահպանության և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման վերաբերյալ ուսուցողական դասընթացներին: WWF-Հայաստանը՝ Ռումինիայի Propark Arii Protejate SRL ընկերության ներկայացուցիչների հետ համատեղ, «Կենսաբազմազանություն և կայուն

տեղական զարգացում Հայաստանում» ծրագրի «Կենսաբազմազանություն և բնության հատուկ պահպանվող տարածքներ» բաղադրիչի շրջանակներում իրականացրել է երկու ուսուցողական դասընթաց՝ ուղղված բնության հատուկ պահպանվող տարածքների և անտառների պահպանության, ինչպես նաև կենսաբազմազանության պահպանության ոլորտներում Էկոպարեկային ծառայության կարողությունների զարգացմանը: Ապրիլի 20-22-ը Երևանում անցկացվել է Training for Trainers («Վերապատրաստողների վերապատրաստում») դասընթացը, որի նպատակն էր ձևավորել վերապատրաստողների խումբ՝ կենսաբազմազանության պահպանության և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պիլոտային դասընթացի շրջանակներում հետագա վերապատրաստումներ իրականացնելու համար: Ապրիլի 27-29-ը Զիկատարի ուսուցողական կենտրոնում անցկացվել է «Բնության հատուկ պահպանվող տարածքների ներածություն» ուսուցողական դասընթացը՝ Էկոպարեկային ծառայության և բնության հատուկ պահպանվող տարածքների աշխատակիցների համար: Դասընթացների ընթացքում մասնակիցները ձեռք են բերել և ընդլայնել գիտելիքները բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման, կենսաբազմազանության պահպանության և պահպանվող տարածքների արդյունավետ կառավարման գործնական մոտեցումների վերաբերյալ՝ վերջում մասնակիցներին տրամադրվել եմ հավաստագրեր:






Սեպտեմբերի 5-6-ը Երևանում անցկացվել է «Tour EXPO 2026» միջազգային մասնագիտացված զբոսաշրջային ցուցահանդեսը, որը մեկ հարթակում համախմբել էր զբոսաշրջության, բնապահպանության և հարակից ոլորտների ներկայացուցիչներին:
Ցուցահանդեսին առանձին տաղավարով մասնակցել է «Դիլիջան» ազգային պարկը՝ ներկայացնելով ազգային պարկի բնական և զբոսաշրջային ներուժը, կենսաբազմազանությունը, անտառային էկոհամակարգերը, բնության հատուկ պահպանվող տարածքի առանձնահատկությունները, ինչպես նաև էկոզբոսաշրջության զարգացման

հնարավորությունները: Ցուցահանդեսի ընթացքում ազգային պարկի ներկայացուցիչները այցելուներին և զբոսաշրջության ոլորտի մասնագետներին ներկայացրել են պարկի գործունեության հիմնական ուղղությունները, զբոսաշրջային երթուղիներն ու հնարավորությունները, ինչպես նաև բնության պահպանության և կայուն զբոսաշրջության զարգացման կարևորությունը: «Tour EXPO 2026»-ը կարևոր հարթակ էր նոր համագործակցությունների ձևավորման, զբոսաշրջային կազմակերպությունների և տուրօպերատորների հետ կապերի ամրապնդման, ինչպես նաև «Դիլիջան» ազգային պարկի զբոսաշրջային ներուժը ավելի լայն լսարանի ներկայացնելու համար:





Սահմանված ժամկետում կատարվել են նախարարության և տնօրինության կողմից ստացված հանձնարարականները և հրամանները, պատասխանվել են գրությունները: Բաժնի աշխատակիցների կողմից տեղամաս - մասնաճյուղերում պարբերաբար իրականացվել են շրջայցեր: Կատարվել է ԴԱՊ-ի պաշտոնական ֆեյսբուքյան էջի թարմացման, նորությունների, ճանապողական, բնապահպանական, էկոկրթական նյութերի տեղադրման աշխատանքներ:

Գիտության, մշտադիտարկման և զբոսաշրջության

բաժնի պետ		Ն. Հովհաննիսյան
Կենսաբան		Ա. Սաֆարյան
Անտառագետ		Հ. Սաղրյան
Մոնիթորինգի մասնագետ		Ռ. Գուլյան